ՆԱԽԱԳԻԾ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի ուսանողական ինքնակառավարման համակարգի կանոնադրություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Անվանում և կարգավիճակ

Հոդված 2. Նպատակներ

Հոդված 3. Խնդիրներ

Հոդված 4. Գործունեության սկզբունքներ

ԳԼՈՒԽ 2. ԿԱՌՈՒՑՎԱԾՔ և ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հոդված 5. Կառուցվածք

Հոդված 6. Ուսանողական ներկայացուչական մարմին՝ Ուսանողական խորհրդարան

Հոդված 7. Ուսանողական խորհրդարանի նախագահ

Հոդված 8. Ուսանողական ինքնակառավարման համակարգի կոորդինացնող օղակ՝ Նախագահության խորհուրդ

Հոդված 9. Ուսանողական ինքնակառավարման մարմիններ

Հոդված 10. Վերահսկիչ հանձնաժողով

ԳԼՈՒԽ 3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Հոդված 11.Կառավարման ձևերը ուսանողական ինքնակառավարման համակարգում

Հոդված 12. Փոխհարաբերությունը բուհի ղեկավարության հետ

Հոդված 13. Համակարգին տրամադրվող միջոցները

Հոդված 14. Փոխհարաբերությունը արտաքին գործընկեր կառույցների հետ

Գլուխ 4. Եզրափակիչ մաս

Հոդված 15. Կանոնադրության փոփոխություններ և լրացումներ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Անվանում և կարգավիճակ

1.1 «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»-ի (այսուհետ՝ համալսարան) ուսանողական ինքնակառավարման համակարգը հանդիսանում է համալսարանում գործող անկախ՝ ներկայացուցչական և ինքնակառավարվող ուսանողական մարմինների համագործակցային համակարգ, որը արտահայտում և պաշտպանում է ուսանողության համընդհանուր շահերը:

1.2 Համակարգը գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ օրենսդրության, համալսարանի ներքին կանոնակարգերի և միջազգային ուսանողական կառույցների հիմնարար սկզբունքների հիման վրա՝ որպես ուսանողական ինքնակառավարման համագործակցային համակարգ:

1.3 Համակարգը չունի իրավաբանական անձի կարգավիճակ, սակայն հանդիսանում է համալսարանի կազմում գործող ինքնավար ուսանողական համակարգ, որը գործում է սեփական կանոնադրությամբ (սույնով) և՝ անհրաժեշտության դեպքում, համագործակցում է համալսարանի և այլ պետական ու հասարակական կառույցների հետ՝ ուսանողների շահերի ներկայացման և պաշտպանության նպատակով:

1.4 Համակարգը ունի սեփական խորհրդանիշերը, կնիքը, պաշտոնական ձևաթղթերը, ամսագրերը, էլեկտրոնային հաղորդակցության միջոցները և սոցիալական ցանցերի էջերը, որոնք հաստատվում և կարգավորվում են խորհրդարանի բարձրագույն ղեկավար մարմինների կողմից:

1.5 Համակարգը հիմնական գործունեությունը ծավալում է համալսարանի տարածքում և ունի համալսարանի կողմից տրամադրված մշտական տեղակայման հասցե:

1.6 Համակարգի պաշտոնական աշխատանքային լեզուն հայերենն է, սակայն միջազգային համագործակցության, օտարերկրյա ուսանողների ներգրավվածության դեպքում օգտագործվում է նաև անգլերենը կամ այլ համապատասխան լեզուներ՝ բազմալեզվության և ներառականության ապահովման նպատակով:

Հոդված 2. Նպատակներ

2.1. Համակարգի հիմնական նպատակը համալսարանի ուսանողության գերակա շահի սպասարկումն է, ուսանողական ձայնի լսելիության ապահովումը:

2.2. Ներկայացնել և պաշտպանել ուսանողների կրթական, սոցիալ-տնտեսական, իրավական, հոգեբանական և մասնագիտական շահերը՝ հիմնվելով ուսանողակենտրոնության, համերաշխության և արդարության սկզբունքների վրա:

2.3. Աջակցել համալսարանում կրթական միջավայրի շարունակական բարելավմանը՝ խթանելով ուսանողների ներգրավումը կրթության կազմակերպման, բարեփոխման և գնահատման գործընթացներում: Ապահովել ուսանողների ներգրավածությունը, որպես համակառավարման լիիրավ կողմ:

2.4. Նպաստել ուսանողի մասնագիտական ինքնագիտակցության, էթիկական պատասխանատվության և քաղաքացիական արժեքների ձևավորմանը:

2.5. Կայունացնել և զարգացնել ուսանողական ինքնակառավարման համակարգի ինստիտուցիոնալ հիմքերը՝ ապահովելով ներառական, բազմազան և խտրականությունից զերծ ուսանողական միջավայր:

2.6. Նպաստել ուսանողների ներգրավմանը գիտահետազոտական, կլինիկական, հանրային առողջության և առողջապահական քաղաքականության գործընթացներում՝ որպես ապագա բժիշկների և առողջապահության պատասխանատու մասնագետների:

2.7. Աջակցել ուսանողական նախաձեռնություններին, ինչպես նաև խթանել նոր նախաձեռնությունների ձևավորումը՝ հիմնված սույն կանոնադրությամբ սահմանված արժեքների և սկզբունքների վրա:

2.8. Նպաստել առողջ ուսանողական մթնոլորտի ձևավավորմանը՝ մշակելով և իրականացնելով ծրագրեր, որոնք ուղղված են ուսանողների կրթական, սոցիալական, մշակութային, մարզական, հոգեբանական կարիքների բավարարմանը, ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, կարիերայի պլանավորմանը և անձի ձևավորմանը:

2.9 Աջակցել համալսարանական կյանքի համապարփակ զարգացմանը՝ խթանելով միջմշակութային, միջհամալսարանական և համայնքային ներգրավվածությունը:

2.10. Նպաստել ուսանողների իրազեկվածությանը՝ տեղեկատվության թափանցիկ տարածման, կրթական, իրավական ու սոցիալական հնարավորությունների մասին տեղեկացման և մասնակցության խթանման միջոցով:

Հոդված 3. ԽՆԴԻՐՆԵՐ

3.1. Փոխադարձ վստահությամբ և վերահսկողությամբ ապահովել, որ ուսանողական մարմինները գործեն խորհրդարանի կանոնադրությամբ սահմանված նպատակների և սկզբունքների հիման վրա: Ապահովել դրանց գործունեության համար անհրաժեշտ միջոցները:

3.2. Խթանել ուսանողների առաջնորդական և ինքնակազմակերպման կարողությունների զարգացումը՝ որպես համալսարանական կառավարման գործընթացներում լիարժեք մասնակիցներ:

3.3. Հստակ գործառույթային ինքնակառվարման մարմինների միջոցով ստեղծել մատչելի և գործառնական միջավայր ուսանողական նախաձեռնությունների ներկայացմանն ու իրականացմանն աջակցելու համար:

3.4. Ապահովել ուսանողական համայնքի և համալսարանի ղեկավարության, լիազոր մարմինների միջև կառուցողական երկխոսություն:

3.5. Իրականացնել մշտադիտարկում ուսանողական կարիքների վերաբերյալ՝ հիմնվելով ներառական մասնակցության և շարունակական հետադարձ կապի մեխանիզմների վրա:

3.6. Զարգացնել համագործակցությունը տեղական, ազգային և միջազգային ուսանողական կառույցների հետ՝ փորձի փոխանակման և համատեղ նախագծերի իրականացման միջոցով:

Հոդված 4. Գործունեության սկզբունքներ

4.1. Մարդու արժանապատվության և հիմնարար իրավունքների պահպանում.
Համակարգի գործունեության ելակետը մարդու արժանապատվությունն է: Խորհրդարանը գործում է համաձայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և ՀՀ Սահմանադրության՝ ճանաչելով ուսանողի անձի ամբողջականությունը, ազատությունն ու իրավահավասարությունը:

4.2. Հավասարություն և խտրականության բացառում.
Ապահովել բոլոր ուսանողների հավասար ներգրավվածությունը՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, սոցիալական և առողջական կարգավիճակից, սեռական կողմնորոշումից, կրոնական կամ քաղաքական հայացքներից: Կառույցը խստորեն մերժում է խտրականության ցանկացած ձև:

4.3. Ներկայացուցչականություն և ներառական մասնակցայնություն.
Համակարգը գործում է որպես համալսարանի ողջ ուսանողության ներկայացուցչական մարմին՝ ապահովելով ուսանողների հավասար մասնակցությունն ու ներկայացվածությունը բոլոր մակարդակներում: Քաջալերվում է փոքրամասնություն կազմող խմբերի ակտիվ ներգրավվածությունը:

4.4. Ուսանողի որպես սուբյեկտի ճանաչում և հզորացում.
Համակարգը ճանաչում է ուսանողին ոչ միայն որպես շահառու, այլ որպես լիիրավ մասնակից՝ կրթության քաղաքականության ձևավորման գործընթացում և ոչ միայն: Ուսանողները դիտարկվում են որպես բուհի համակառավարման լիարժեք անդամ:

Համակարգը պաշտպանում է ուսանողների կարծիքի արտահայտման ազատությունը, խթանում է նրանց ներգրավվածությունը ազդելու իրենց կրթական և սոցիալական միջավայրի ձևավորման, բարեփոխման, կառավարման և գնահատման գործընթացներում: Խթանելով նորարար մտածողությունը, քննադատական վերլուծությունը և ուսանողների մասնակցությունը հանրային կյանքին՝ զարգացնելով նրանց որպես ակտիվ, տեղեկացված և պատասխանատու քաղաքացիներ:

4.5. Անկախություն և ինքնավարություն.
Համակարգը գործում է անկախ որևէ արտաքին կառույցից՝ ներառյալ քաղաքական, կրոնական, պետական կամ կոմերցիոն միավորներ: Ապահովվում է կառույցի ինքնավարությունը՝ իր ներքին կանոնադրությամբ և մանդատով սահմանված շրջանակներում:

4.6. Հաշվետվողականություն, թափանցիկություն և հանրային վերահսկողություն.
Համակարգը պարտավորվում է ապահովել իր գործունեության թափանցիկությունը՝ հրապարակելով որոշումները և տարեկան հաշվետվությունները:

4.7. Ժողովրդավարություն.
Համակարգը գործում է ժողովրդավարական սկզբունքներով. բոլոր ղեկավար մարմինները ձևավորվում են ընտրությունների միջոցով՝ հավասար ձայնի իրավունքով: Ղեկավարության մանդատները սահմանափակ են ժամանակով և պարբերաբար ենթակա են ընտրության՝ ապահովելով ղեկավար պաշտոնների թարմացվող բնույթը:

4.8. Միջավայրի մատչելիություն.
Համակարգը ապահովում է ուսանողների համար հավասար մասնակցային հնարավորություններ՝ ֆիզիկական, հոգեբանական և սոցիալ-մշակութային մատչելիություն բոլոր ուսանողների համար: Այդ թվում նաև ներառական պայմաններ հաշմանդամություն ունեցող անձանց, սոցիալապես խոցելի խմբերի, ազգային փոքրամասնությունների և այլ ուսանողների լիարժեք մասնակցության համար:

4.9. Համերաշխություն և մշակութային բազմազանություն.
Համակարգը հավատարիմ է տարբեր մշակույթների, լեզուների և ինքնությունների հանդեպ հարգանքի սկզբունքին՝ նպաստելով բազմամշակութային երկխոսությանը, համակեցությանը, փոխօգնությանը և բարեկամությանը ուսանողական միջավայրում:

4.10. Կրթության որակի մշտադիտարկում և բարելավում.
Համակարգը պարտավորվում է շարունակաբար հետևել կրթության որակին և ուսանողների ակնկալիքներին՝ առաջ քաշելով որակական բարեփոխումների օրակարգ և պաշտպանելով ուսանողների շահերը կրթական բարեփոխումների ընթացքում:

4.11. Տեղեկատվության մատչելիություն և թվայնացում.

Համակարգը պարտավորվում է ապահովել ուսանողների լիարժեք իրազեկվածությունն իր գործունեության, հնարավորությունների և մասնակցության մեխանիզմների մասին՝ կիրառելով արդի թվային տեխնոլոգիաները և բաց տվյալների սկզբունքները:

4.12. Բնապահպանական և սոցիալական պատասխանատվություն.
Համակարգը նպաստում է շրջակա միջավայրի պաշտպանությանը միտված նախաձեռնություններին, պատասխանատու սպառմանը և սոցիալական արդարությանը:

ԳԼՈՒԽ 2. Կառուցվածք և մարմիններ

Հոդված 5.Կառուցվածք

5.1 Ուսանողական ինքնակառավարման համակարգի ընդհանուր նկարագիրը.

Ուսանողական ինքնակառավարման համակարգը բուհում ունի հստակ, հիերարխիկ, բայց ոչ կենտրոնացված կառուցվածք, համակարգը գործում է փոխհամագործակցային սկզբունքով, որտեղ ուսանողական բարձրագույն մարմինը ունի համակարգող և ներկայացուցչական դեր, իսկ առանձին ինքնակառավարման մարմինները հստակ ուղվածության ինքնավար գործառույթներ:

5.2 Ուսանողական ինքնակառավարման համակարգը ներառում է՝

- ուսանողական ներկայացուցչական մարմին՝ **ուսանողական խորհրդարան,**
- ուսանողական այլ **ինքնակառավարման մարմիններ**, որոնք գործում են սույն կանոնակարգին համապատասխան՝ իրենց ներքին կանոնակարգերով,
- կոորդինացնող օղակ՝ **ուսանողական խորհուրդ (նախագահություն)**, որը ապահովում է ուսանողական խորհրդարանի և բուհում գործող ուսանողական մյուս ինքնակառավարման մարմինների փոխկապակցումը և համագործակցությունը,
- **վերահսկիչ հանձնաժողով,** որը վերահսկում է ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության իրավաչափությունը:

Հոդված 6.Ուսանողական ներկայացուցչական մարմին՝ Ուսանողական խորհրդարան (ՈՒԽ)

6.1 Ընհանուր բնութագիրը

6.1.1. Ուսանողական խորհրդարանը հանդիսանում է բուհի ուսանողական համայնքի բարձրագույն ներկայացուցչական մարմինը:

6.1.2. Ուսանողական խորհրդարանը իրավասու է հանդես գալ ուսանողական համայնքի անունից բուհի կառավարման բոլոր մակարդակներում:

6.1.3. Ուսանողական խորհրդարանը ՝ որպես համաբուհական ներկայացուցչական մարմին, բաղկացած է 20 ընտրված անդամից:

6.1.4. Ուսանողական խորհրդարանի յուրաքանչյուր անդամի լիազորությունների ժամկետը 2 տարի է, եթե սույն կանոնակարգով սահմանված հիմքերով անդամի կամ տվյալ գումարման ուսանողական խորհրդարանի լիազորությունները ավելի վաղ չեն դադարեցվում:

6.2 Ձևավորման կարգը

6.2.1. Ուսանողական խորհրդարանը ձևավորվում է բուհի ուսանողների կողմից՝ համաբուհական ընտրությունների միջոցով՝ անկախ ֆակուլտետային և կուրսային պատկանելությունից:

6.2.2. Ընտրական գործընթացը կազմակերպում է բուհում գործող ընտրական անկախ մարմինը, ապահովելով հավասար մասնակցության, թափանցիկության և գաղտնի քվեարկության սկզբունքները:

6.2.3. Ուսանողական խորհրդարանի լիազորությունները լրանալուց առնվազն 3 ամիս առաջ խորհրդարանի նախագահը գրավոր կերպով դիմում է բուհում գործող ընտրական անկախ մարմնին, որը սահմանված կարգով կազմակերպում է ընտրությունները:

6.2.4. Բուհի ուսանողները ունեն հավասար ընտրական իրավունք՝ որպես ընտրող:

6.2.5. Ընտրությունները անցկացվում են առնվազն յուրաքանչյուր երկու տարին մեկ:

6.2.6. Ընտրություններից առնվազն 2 ամիս առաջ բուհի ուսանողությանը տեղեկացվում է այդ մասին՝ ինչպես պաշտոնական ծանուցման ձևաչափով (բուհի կողմից ուսանողներին տրամադրված էլեկտրոնային փոստի միջոցով), այնպես էլ ուսանողական խորհրդարանի և բուհի տարբեր էլեկտրոնային հարթակների միջոցով:

6.2.8. Թեկնածուների գրանցումը կատարվում է ծանուցումից հետո մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում:

6.2.9. Բուհի բոլոր ուսանողները ունեն հավասար մասնակցային իրավունք՝ որպես թեկնածու: ՈՒսանողական խորհրդարանի անդամի թեկնածու կարող է առաջադրվել յուրաքանչյուր ուսանող, ով բավարարում է հետևյալ պահանջներին.

- Ունի ակտիվ ուսանողական կարգավիճակ և չի գտնվում ակադեմիական արձակուրդում:
- Ունի վերջին ուսումնական տարվա միջին որակական գնահատական (ՄՈԳ) առնվազն 7.0 կամ վերջին ուսումնական տարվա ընթացքում ուսանողի ակտիվության գնահատման համակարգում ունենա նվազագույնը միջին ակտիվություն, որը հավաստվում է համակարգում նախորդ տարվա ուսանողների տվյալների օբյեկտիվ վիճակագրական վերլուծության հիման վրա (բարձր, միջին, ցածր խմբերի առանձնացմամբ):
- Համաձայն է ընտրական գործընթացում հանդես գալ բաց և հաշվետու կերպով՝ պատրաստ լինելով պատասխանել ուսանողության հարցերին:
- Թեկնածուն պարտավոր է ներկայացնել իր գործունեության ծրագիրը, որտեղ արտացոլվում են ուսանողական կյանքի, կրթական միջավայրի և ինքնակառավարման համակարգի զարգացման իր տեսլականը և առաջարկները: Ծրագրի չներկայացումը համարվում է ինքնաբացարկ և հիմք է թեկնածուին չգրանցելու համար:

Թեկնածուի գործունեության ծրագիրը հանդիսանում է փաստաթուղթ, որտեղ թեկնածուն ներկայացնում է իր տեսլականը, առաջնահերթությունները և գործողությունների պլանը՝ իր առաջադրման մարմնի լիազորությունների շրջանակում: Ծրագիրը պետք է արտացոլի.

- բուհում ուսանողական կյանքի զարգացման հիմնական ուղղությունները,
- ուսանողների իրավունքների պաշտպանության և մասնակցության ապահովման մոտեցումները,
- համագործակցության ձևերը այլ ուսանողական և կառավարման մարմինների հետ,
- նախաձեռնությունների և ծրագրերի իրականացման մեխանիզմները,
- թափանցիկության, հաշվետվողականության ապահովման միջոցները:

Գործունեության ծրագիրը ներկայացվում է գրավոր ձևով և հրապարակվում է ընտրություններից առնվազն 20 աշխատանքային օր առաջ:

6.3. Խորհրդարանը իր գործունեության շրջանակում իրականացնում է հետևյալ լիազորությունները.

6.3.1. Սույն կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկի ներկայացում բուհի հոգաբարձուների խորհրդին:

6.3.2. Իր կազմից ընտրել նախագահ, որը ի պաշտոնե հանդիսանում է կորդինացնող մարմնի նախագահ:

6.3.3. Բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով, Ուսանողական ներկայացուցչական մարմինը իր կազմից ներկայացնում է ուսանող անդամներին բուհի

Հոգաբարձուների խորհուրդ: Ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստացել է քվեարկությանը մասնակցած ուսանողների ձայների առնվազն 50% + 1-ը (պարզ մեծամասնություն): Եթե որևէ թեկնածուի կողմից ձայների պարզ մեծամասնությունը ստանալ չի հաջողվում, ապա անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ: Երկրորդ փուլին մասնակցում են այն երկու թեկնածուները, ովքեր ունեն ուսանողի ակտիվության գնահատման համակարգում տվյալ տարվա կտրվածքով ամենաբարձր միավորները, իսկ այդ տվյալների բացակայության դեպքում՝ ամենաբարձր ՄՈԳ-ն (միջին որակական գնահատական) ունեցող թեկնածուները: Երկրորդ փուլում կրկին հավասար ձայներ ստանալու դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ունի ուսանողի ակտիվության գնահատման համակարգում ավելի բարձր միավոր, իսկ այս տվյալների բացակայության դեպքում՝ ամենաբարձր ՄՈԳ ցուցանիշը:

6.3.4. Ուսանողական ինքնակառավարման համակարգի համար մշակել և հաստատել ներքին կարգավորումներ:

6.3.5. Մշակել և նախագահությանը ներկայացնել ուսանողական ինքնակառավարման ռազմավարական ուղղություններ, որոնք խորհրդի կողմից ենթադրում են պարտադիր կատարում համապատասխան գործառույթային ինքնակառավարման մարմնի կողմից: ՈՒԻՄ-ների զարգացման ուղղությամբ խորհրդարանը կարող է հաստատել միասնական ռազմավարական փաստաթուղթ՝ երկարաժամկետ տեսլականով և նպատակներով:

6.3.6. Հետևել ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության կատարողականությանը՝ ըստ նրանց կողմից ներկայացված տարեկան գործողությունների պլանի, ինչպես նաև գնահատել իրականացված նախաձեռնությունների համապատասխանությունը սահմանված ռազմավարական ուղղություններին:

6.3.7. Ուսանողական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետության վերաբերյալ առաջարկներ ներկայացնել վերահսկիչ հանձնաժողովին:

6.3.8. Ապահովել ուսանողական ինքնակառավարման համակարգի գործունեության թափանցիկություն, ներառականություն և հաշվետվողականություն ուսանողության առջև:

6.3.9. Ուսանողական ինքնակառավարման համակարգի բարձրագույն մարմինը կարող է իր գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով սահմանել ներկայացուցչական ենթակազմեր կամ պատասխանատու անձինք (իր կազմից և ոչ միայն)՝ ուսանողական համայնքի առանձին խմբերի շահերն ամբողջական

ներկայացնելու նպատակով: Խմբային պատասխանատուները հանդիսանում են ուսանողական խորհրդարանի խորհրդատվական կարգավիճակ ունեցող ներկայացուցիչներ, որոնք ապահովում են առանձին ուսանողական խմբերի հետաքրքրությունների փոխանցումը և երկկողմանի հաղորդակցությունը:

6.3.9.1 Այդ խմբային ներկայացուցչությունը կարող է հիմնվել հետևյալ չափորոշիչների վրա՝

- ֆակուլտետային պատկանելություն,
- օտարալեզու կամ բազմալեզու կրթական ծրագրերի ուսանողներ (մշակութային լեզվական առանձնահատկություններ),
- մասնագիտական ուղղվածության կամ ակադեմիական հատուկ խմբերի առանձնահատկություն:

6.3.9.2. Նշված պատասխանատուները ընտրվում են ուսանողական ինքնակառավարման համակարգի բարձրագույն մարմնի կողմից սահմանված կարգով՝բաց և թափանցիկ առաջադրման սկզբունքների պահպանմամբ (կարող է առաջադրվել ցանկացած ուսանող):

6.3.9.3. Խմբային պատասխանատուները ունեն հետևյալ լիազորությունները՝

- Ներկայացնել իրենց համապատասխան ուսանողական խմբի խնդիրները, առաջարկությունները և նկատառումները ուսանողական խորհրդարանին կամ նախագահությանը՝ սահմանված կարգով:
- Մասնակցել խորհրդարանի, խորհրդի, ինքնակառավարման մարմինների նիստերին՝ որպես հրավիրված խորհրդատու անձ, առանց ձայնի իրավունքի (եթե համատեղության կարգով չունեն լիարժեք անդամի կարգավիճակ) :
- Ուսանողների և ինքնակառավարման մարմինների միջև գործել որպես կապող օղակ:
- Իրավունք ունենալ ուսանողական բարեկեցությանը վերաբերող թեմաների շուրջ գործունեություն իրականացնել (բայց ոչ-գործադիր ձևաչափով)՝հանդիպումների, քննարկումների ձևաչափով տվյալների հավաքագրման և առաջարկությունների ներկայացման նպատակով համապատասխան մարմնին:

6.3.9.4. Խմբային պատասխանատուները չպետք է և չեն կարող.՝

- Գործադիր կամ կառավարման լիազորություններ ունենալ
- Չունեն ծրագրեր կամ միջոցառումներ իրագործելու ինքնուրույն իրավասություն
- Չեն կարող միջամտել ինքնակառավարման մարմինների ներքին կառավարմանը

6.4. Խորհրդարանի անդամն իր գործունեության ընթացքում ունի հետևյալ լիազորությունները.

6.4.1 Ուսանողական խորհրդարանանի ադամը հանդիսանում է ուսանողության լիիրավ ներկայացուցիչը և կարող է ներկայացնել ուսանողների կարծիքը, խնդիրները և առաջարկությունները ուսանողական ինքնակառավարման համակարգի ցանկացած օղակում:

6.4.2 Մասնակցել Ուսանողական խորհրդարանի բոլոր նիստերին, քննարկումներին և քվեարկություններին՝ իր ձայնի իրավունքով:

6.4.3 Ներկայացնել առաջարկներ Ուսանողական խորհրդարանի նիստերի օրակարգում հարցեր ներառելու, ինչպես նաև գործող կանոնակարգերի, ծրագրերի և որոշումների կատարելագործման վերաբերյալ:Առաջարկել նոր նախաձեռնություններ կամ նախագծեր ուսանողական համայնքի շահերից ելնելով:

6.4.4 Մասնակցել Ուսանողական խորհրդարանի կողմից ստեղծվող աշխատանքային խմբերի աշխատանքին: Անդամակցել ուսանողական ինքնակառավարման մյուս համակարգերին բացառությամբ վերահսկիչ հանձնաժողովի:

6.4.5 Ներկայացնել իր անհամաձայնությունը կամ լրացուցիչ կարծիքը՝ որպես արձանագրված հատուկ կարծիք: Առանձին հարցերի կամ ինքնակառավարման մարմինների տարեկան հաշվետվությունների վերաբերյալ:

6.4.6 Ստանալ ուսանողական ինքնակառավարման համակարգի գործունեության, նիստերի, որոշումների և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

6.4.7 Թեկնածու լինել խորհրդարանի նախագահի, քարտուղարի կամ աշխատանքային խմբերի ղեկավարների պաշտոնների համար՝ սահմանված չափանիշներին համապատասխանելու դեպքում:

6.4.8 Նպաստել որոշումների կատարողականի ապահովմանը և խորհրդարանի հեղինակության ամրապնդմանը: Խնդիրներ արձանագրելու դեպքում սահմանված ձևաչափով դիմել վերահսկիչ հանձնաժողով:

6.4.9 Վերահսկել նախագահի գործունեությունը և անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով անվստահություն հայտնել:

6.5 Ուսանողական խորհրդարանի անդամի պարտականությունները

6.5.1 Պարտավոր է հաշվետու լինել նրան ընտրած ուսանողներին և պարբերաբար ներկայացնել իր գործունեության մասին ամփոփ տեղեկատվություն:

6.5.2 Պարտավոր է իր գործունեությունը իրականացնել բուհի և խորհրդարանի կանոնադրությանը, ինչպես նաև ուսանողական էթիկայի կանոններին համապատասխան:

6.5.3 Պետք է ցուցաբերի բարձր էթիկական վարքագիծ, հարգալից վերաբերմունք ուսանողների, դասախոսների և աշխատակիցների նկատմամբ:

6.5.4 Անթույլատրելի է բուհի կամ խորհրդարանի հեղինակությունը նսեմացնող, ապատեղեկատվություն տարածող կամ խտրականություն առաջացնող վարքագիծը:

6.5.5 Պարտավոր է ներկայացնել ուսանողական համայնքի ընդհանուր շահերը՝ առանց անհատական կամ ֆակուլտետային կողմնակալության:
6.5.6 Պարտավոր է չհրապարակել խորհրդարանի նիստերի ընթացքում քննարկված ներքին կամ գաղտնի բնույթի տեղեկությունները առանց խորհրդի համաձայնության:
6.5.7 Պարտավոր է պահպանել ուսանողական ակտիվության գնահատման համակարգում իր ակտիվ մասնակցությունը՝ նվազագույնը միջին ակտիվություն:
6.5.8 Պարտավոր է գործել գործընկերային և կառուցողական ձևով՝ հարգելով խորհրդարանի մյուս անդամների տեսակետները:
6.5.9

6.6. ՈՒԽ անդամի լիազորությունները դադարեցվում են հետևյալ դեպքերում.

6.6.1. Սեփական դիմումի համաձայն, անդամի լիազորություններից ինքնակամ հրաժարվելու ձևով:
6.6.2. Ուսանողի կարգավիճակի դադարեցման դեպքում:
6.6.3. Անգործության դեպքում, որը հավաստվում է ուսանողի ակտիվության գնահատման համակարգում նվազագույնը միջին ակտիվության չապահովմամբ:
6.6.4. Էթիկական կամ կարգապահական խախտման՝ հաստատված համապատասխան մարմնի (բուհի էթիկայի կամ կարգապահական հանձնաժողովի) որոշմամբ:
6.6.5. Անդամի լիազորությունները դադարեցվում են , եթե նա՝

- օգտագործում է Ուսանողական խորհրդարանի հարթակները կամ միջոցառումները քաղաքական կամ կրոնական քարոզչության նպատակով,
- հանդես է գալիս բուհի և ուսանողական ինքնակառավարման արժեքներին հակասող հրապարակային հայտարարություններով,
- տարածում է ապատեղեկատվություն կամ խեղաթյուրում է փաստերը, որոնք կարող են վնասել Ուսանողական խորհրդարանի, բուհի կամ այլ ուսանողների հեղինակությանը:

Նշում. Նման դեպքերի գնահատումն ու որոշումը կատարվում է վերահսկիչ հանձնաժողովի կողմից՝ ներքին քննության ընթացակարգով:

6.6.6. ՈՒԽ անդամի լիազորությունները դադարեցվում են խորհրդարանի նիստերին չմասնակցելու դեպքում՝ առանց հիմնավորված պատճառի մեկ անգամ բացակայելու**,** կամ հարգելի պատճառով երեքից ավելի բացակայելու դեպքում՝ մեկ ուսումնական տարվա ընթացքում:

Նշում. Հարգելի պատճառ համարվում է բժշկական, ընտանեկան կամ ուսումնական ծանրակշիռ հանգամանքը, որի մասին անդամը նախապես գրավոր կերպով տեղեկացրել է խորհրդարանի քարտուղարությանը կամ նախագահին:

6.6.7. Լիազորությունների դադարեցման մասին որոշումը կայացնում է վերահսկիչ հանձնաժողովը, համապատասխան միջնորդությունների հիման վրա:

6.6.8. Լիազորությունների դադարեցման դեպքում առաջացած թափուր տեղը լրացվում է՝
ա.ընտրացուցակի հաջորդող թեկնածուով՝ ըստ ընտրությունների արդյունքների,
բ. կամ անհրաժեշտության դեպքում՝ կազմակերպվում է լրացուցիչ ընտրություն՝ վերահսկիչ հանձնաժողովի միջնորդությամբ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

Հոդված 7. Ուսանողական խորհրդարանի նախագահ

7.1. Ընդհանուր բնութագիրը

7.1.1. Ուսանողական խորհրդարանի նախագահը հանդիսանում է ուսանողական խորհրդարանի բարձրագույն ներկայացուցիչը և գլխավոր պատասխանատուն բուհի ուսանողական ինքնակառավարման համակարգի գործունեության համար:
7.1.2. Նախագահը ղեկավարում է Ուսանողական խորհրդարանի աշխատանքը, կազմակերպում և համակարգում համալսարանական բոլոր ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությունը՝ նախագահության նիստերի միջոցով:

7.2 Նախագահի ընտրության կարգը

7.2.1. Ուսանողական խորհրդարանի նախագահի ընտրությունը կատարվում է ուսանողական խորհրդարանի ձևավորմանը հաջորդող առաջին նիստի ընթացքում՝ փակ (գաղտնի) քվեարկությամբ:

7.2.2. Ուսանողական խորհրդարանի առաջին նիստը վարում է տարիքով ամենաավագ ներկայացուցիչը:
7.2.3. Ուսանողական խորհրդարանի նախագահի թեկնածու կարող է լինել միայն խորհրդարանի այն անդամը, ով համապատասխանում է հետևյալ չափանիշներին.

- Ուսանողի ակտիվության գնահատման համակարգում ունենա նվազագույնը միջին ակտիվություն որը հավաստվում է համակարգում նախորդ ուսումնական տարվա ուսանողների տվյալների օբյեկտիվ վիճակագրական վերլուծության հիման վրա (բարձր, միջին, ցածր խմբերի առանձնացմամբ):
- Ունի առաջնորդական և կազմակերպչական հմտություններ, ինչը պետք է հավաստվի առնվազն երեք ծրագրի կամ միջոցառման նախաձեռնման և ամբողջական ղեկավարման փաստերով, որոնք իրականացվել են ուսանողական ինքնակառավարման համակարգում:
- Տիրապետում է հստակ և կառուցվածքային արտահայտման, բանավիճելու և բանակցելու հմտություններին:

7.2.4. Նախագահի թեկնածուն պարտավոր է ուսանողական խորհրդարանին ներկայացնել իր գործունեության ռազմավարական ծրագիրը, որը պետք է ներառի երկու բաղադրիչ.

1. Տարեկան գործողությունների ծրագիր.
   Ներկայացնում է հաջորդ ուսումնական տարվա ընթացքում իրագործվելիք հստակ նախագծային ուղղությունները, միջոցառումները և կառուցվածքային բարեփոխումները՝ հստակ նպատակներով, ժամկետներով:
   Տարեկան ծրագիրը ծառայում է որպես նախագահի գործունեության հիմնական ռազմավարական ուղենիշ, որին համահունչ նա ներկայացնում է իր տարեկան գործունեության հաշվետվությունները:
2. Երկամյա ռազմավարական ծրագիր.
   Սա թեկնածուի կողմից ներկայացվող ՈՒԽ տեսլական է , որի հիմքում դրված է ոչ թե առանձին գործողությունների իրականացումը, այլ ուժերի, ռեսուրսների և նախաձեռնությունների համակարգումը՝ ուսանողական ինքնակառավարման որևէ ոլորտի կատարելագործման ուղղությամբ: Ոլորտի ընտրության պարզաբանումը և առաջնահերթությունները կարող են ձևավորվել ըստ ժամանակի պահանջով առաջացող կարիքների և կամ մի շարք այլ հիմնավորումներով:

7.2.5. Քվեարկությունը կատարվում է փակ, գաղտնի ձևով, ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքում է խորհրդարանի անդամների ամենաշատ ձայները:

7.2.6. Եթե քվեարկության արդյունքում երկու կամ ավելի թեկնածուներ ստանում են նույնքան ձայներ, ապա անցկացվում է վերաքվեարկություն՝ միայն այդ թեկնածուների միջև:
Եթե վերաքվեարկության արդյունքում ևս պահպանվում է ձայների հավասարությունը՝ապա հաղթող է ճանաչվում այն թեկնածուն, ով ուսանողի ակտիվության գնահատման համակարգում ունի ավելի մեծ միավոր:

7.2.7. Ընտրված նախագահի հաստատված ծրագիրը ենթակա է հրապարակման ՈՒԽ-ի պաշտոնական հարթակներում՝ ուսանողության լայն իրազեկվածությունը ապահովելու նպատակով:

7.2.8. Ուսանողը կարող է ընտրվել ուսանողական խորհրդարանի նախագահ մեկ անգամ առանց վերընտրվելու հնարավորության:

7.3. Նախագահի լիազորությունները

7.3.1. Ուսանողական խորհրդարանի նախագահը ղեկավարում է ուսանողական խորհրդարանի աշխատանքը և ապահովում է դրա արդյունավետ գործունեությունը:
7.3.2. Կազմակերպում և նախագահում է Ուսանողական խորհրդարանի նիստերը, ստորագրում է նիստերի արձանագրությունները և ընդունված որոշումները: Ունի

ստորագրության և կնքման իրավունք Ուսանողական խորհրդարանի պաշտոնական փաստաթղթերի, որոշումների և նամակագրության վրա:
7.3.3. Ներկայացնում է Ուսանողական խորհրդարանը և ամբողջ ուսանողական ինքնակառավարման համակարգը բուհի կառավարման մարմիններում, ինչպես նաև արտաքին հարաբերություններում:
7.3.4. Կոորդինացնում է նախագահության աշխատանքը և ապահովում խորհրդարանի և մյուս ուսանողական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը:
7.3.5. Հետևում է խորհրդարանի ընդունած որոշումների և ծրագրերի իրականացման ընթացքին՝ ստանձնելով պատասխանատվություն դրանց կատարողականության համար:
7.3.6. Ներկայացնում է Ուսանողական խորհրդարանը տարեկան հաշվետվությունը ընդլայնված նիստին:
7.3.7. Իրականացնում է ուսանողական նախաձեռնությունների և ծրագրերի ռազմավարական ուղղությունների մշակման և հաստատման գործընթացի ընդհանուր ղեկավարումը:
7.3.8. Ներկայացնում է ուսանողական ինքնակառավարման համակարգի գործունեության վերաբերյալ առաջարկներ և հաշվետվություններ բուհի ղեկավարությանը և հոգաբարձուների խորհրդին:
7.3.9. Պատասխանատու է ուսանողական ինքնակառավարման համակարգի կանոնադրության, ներքին կարգապահական և էթիկական նորմերի պահպանման համար:
7.3.10. Խորհրդարանի հաստատմանը կարող է ներկայացնել առաջարկություններ՝ ձևավորելու ժամանակավոր գործունեության աշխատանքային խմբեր կոնկրետ ծրագրերի կամ խնդիրների կատարման նպատակով:
7.3.11. Նախաձեռնում է ուսանողական խորհրդարանի և նախագահության նիստերի գումարումը՝ ըստ անհրաժեշտության կամ խորհրդարանի անդամների առնվազն 1/3-ի պահանջով:
7.3.12. Պահպանելով խորհրդարանական կառավարման սկզբունքը՝ նախագահը չի կարող միանձնյա ընդունել որոշումներ, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ վերապահված են խորհրդարանին կամ նախագահությանը:
7.3.14. Նախագահը անձամբ պատասխանատվություն է կրում բուհի կողմից ուսանողական ինքնակառավարման համակարգին տրամադրված միջոցների նպատակային, արդյունավետ և հաշվետու օգտագործման համար՝ համաձայն բուհի ֆինանսական կանոնակարգերի:

7.3.15. Համակարգել համալսարանի բոլոր ուսանողական ինքնակառավարման մարմինների համագործակցությունը և ապահովել տեղեկատվության շարունակական հոսքը դրանց միջև:

7.3.16. Մշակել և ներկայացնել ուսանողական խորհրդարանի հաստատմանը տարվա գործունեության ռազմավարական ծրագիրը: Ապահովել ծրագրի իրագործման արդյունավետ ընթացքը և պարբերաբար ներկայացնել կատարված աշխատանքների ամփոփ հաշվետվություններ (տարեկան նվազագույնը 1 անգամ):

7.3.17. Պարտավոր է խորհրդարանին տեղեկացնել բոլոր որոշումների, ստորագրած փաստաթղթերի և ընդունված նախաձեռնությունների մասին: Խորհրդարանի պահանջով պարտավոր է ներկայացնել լրացուցիչ բացատրություններ կամ հաշվետվություններ՝ առանձին ծրագրերի և միջոցառումների վերաբերյալ:

7.3.18 Նախագահը պարտավոր է ապահովել ուսանողության հետ երկխոսության և լսելիության հստակ մեխանիզմներ՝
կազմակերպելով որոշակի պարբերականությամբ հստակ ձևաչափերով հանդիպումներ, որտեղ ուսանողները կարող են ներկայացնել իրենց առաջարկները, խնդիրները և դիտարկումները ուսանողական կյանքի վերաբերյալ:

7.3.19. Նախագահը պարտավոր է յուրաքանչյուր տարվա ավարտին ներկայացնել ուսանողական խորհրդարանին և ընդլայնված նիստին տարեկան հաշվետվություն՝ որպես իր գործունեության հիմնական ռազմավարական ուղենիշ հիմք ընդունելով Ուսանողական խորհրդարանի նախագահի ընտրությունների ընթացքում ներկայացրած գործունեության ծրագրերը:

7.3.20.1.Նախագահը ներկայացուցչական մարմնի անդամներից նշանակում է փոխնախագահ:

7.3.20.2. Փոխնախագահի լիազորությունները սահմանվում են Ուսանողական խորհրդարանի նախագահի կողմից՝ սույն կանոնակարգին համապատասխան:
Նախագահը կարող է իր լիազորություններից որոշակի մասը փոխանցել փոխնախագահին:
Փոխնախագահը չի կարող ընդունել այնպիսի որոշումներ, որոնք օրենքով կամ սույն կանոնակարգով վերապահված են բացառապես Ուսանողական խորհրդարանի նախագահին կամ Ուսանողական խորհրդարանին:

7.3.21. Նախագահը նշանակում է քարտուղար, որի լիազորությունների շրջանակը սահմանվում է ներքին կարգավորումներով:

7.4. Նախագահի լիազորությունները դադարեցվում են հետևյալ դեպքերում՝
7.4.1. Նախագահի կողմից հրաժարական ներկայացնելու դեպքում՝ խորհրդարանին գրավոր դիմումին համաձայն:

7.4.2 Նախագահի լիազորությունների ժամկետի լրանալու դեպքում:

7.4.3. Եթե դադարում է ունենալ ուսանողի կարգավիճակ:

7.4.4.Խորհրդարանի առնվազն 2/3-ի կողմից անվստահություն հայտնելու պարագայում (փակ գաղտնի քվեարկության ընթացակարգով) : Նիստի արձանագրությունը ներկայացվում է վերահսկիչ հանձնաժողովին և բուհի ղեկավարությանը տեղեկության կարգով:

4.4.5. Վերահսկիչ հանձնաժողովի որոշմամբ հետևյալ դեպքերում՝

- նախագահի կողմից իր պարտականությունների կրկնակի կամ համակարգային չկատարման, ինչպես նաև ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործման դեպքում: Մեկ ուսումնական կիսամյակի ընթացքում հաստատված գործողությունների պլանի 50%-ից պակաս կատարողականության դեպքում:
- քաղաքական, կրոնական կամ կուսակցական քարոզչության իրականացման, ինչպես նաև ապատեղեկատվություն տարածելու կամ համալսարանի հեղինակությանը վնաս հասցնելու դեպքերում:
- անհատական կամ խմբային շահ սպասարկելու պարագայում, եթե կան փաստական հիմքեր:
- դիտավորությամբ որևէ ինքնակառավարման մարմնի գործունեության անհիմն խոչընդոտման պարագայում:
- ուսանողական ինքնակառավարման համակարգում ընդգրկված ուսանողների օրենքով սահմանված հնարավորությունների սահմանափակման, անարդար մասնակցաային հնարավորությունների ստեղծման, հասանելիք խրախուսումների տրամադրմանը խոչընդոտելու դեպքերում:

7.5 Ուսանողական խորհրդարանի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվում է հետևյալ դեպքերում.

- Նախագահի հրաժարականի կամ լիազորությունների դադարեցման դեպքում մինչև նոր նախագահի ընտրությունը:
- Նախագահի երկարատև (10 աշխատանքային օրից ավել) բացակայության դեպքում՝ առողջական, ուսումնական կամ անձնական պատճառներով:

7.5.1. Նախագահի լիազորությունների դադարեցման պահից մինչև նոր նախագահի ընտրությունը Ուսանողական խորհրդարանի նախագահի պարտականությունները կատարում է խորհրդարանի փոխնախագահը ժամանակավոր պաշտոնակատարի (ԺՊ)՝ կարգավիճակով:

7.5.2.Նոր նախագահի ընտրությունները կազմակերպվում են նախագահի լիազորությունները դադարելուց ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում սահմանված ընթացակարգով:

7.5.3 Նախագահի լիազորությունները դադարելուց առավելագույնը 30 օրվա ընթացքում համապատասխան ընթացակարգով նոր նախագահի չընտրվելու պարագայում վերահսկիչ հանձնաժողովի կողմից միջնորդություն է ներկայացվում հոգաբարձուների խորհրդին՝ կազմակերպել ներկայացուցչական մարմնի նոր ընտրություններ:

7.5.4. ԺՊ-ի կողմից ընդունված բոլոր որոշումները ուժի մեջ են մտնում միայն խորհրդարանի կողմից հաստատվելու պարագայում: ԺՊ-ի լիազորությունները

սահմանափակվում են բացառապես ընթացիկ և տեխնիկական բնույթի հարցերով, այդ թվում՝

- նիստերի կազմակերպում և վարում,
- ընթացիկ նամակագրության և կազմակերպչական աշխատանքների համակարգում,
- բուհի կառավարման մարմինների հետ ընթացիկ կապի ապահովում,
- խորհրդարանի ընդունած որոշումների իրականացման վերահսկում:

7.5.5. ԺՊ-ն չի կարող.

- նախաձեռնել կառուցվածքային կամ ռազմավարական փոփոխություններ,
- կատարել նշանակումներ կամ հեռացումներ,
- ստորագրել իրավական կամ ֆինանսական պարտավորություններ ստեղծող փաստաթղթեր առանց խորհրդարանի հաստատման,
- փոփոխել խորհրդարանի հաստատած ծրագրերը կամ բյուջեն:

7.5.6. ԺՊ-ը պաշտոնավարում է առավելագույնը 30 օր՝ մինչև նոր նախագահի ընտրության անցկացումը: Եթե այդ ընթացքում չեն անցկացվում նախագահի ընտրություններ, ինքնակառավարման համակարգը անցում է կատարում խորհրդային կառավարման:

7.5.7. ԺՊ-ն պարտավոր է հաշվետվություն ներկայացնել խորհրդարանին իր պաշտոնավարման ընթացքում իրականացված բոլոր գործողությունների վերաբերյալ:

Հոդված 8 Ուսանողական ինքնակառավարման համակարգի կոորդինացնող օղակ՝ ՈՒսանողական խորհուրդ (նախագահություն)

8.1. Ընդհանուր բնութագիր

8.1.1. Նախագահությունը հանդիսանում է ուսանողական ինքնակառավարման համակարգի գործադիր մարմինը, որը ապահովում է խորհրդարանի ընդունած որոշումների, ռազմավարական ծրագրերի և տարեկան գործողությունների պլանի իրականացումը:

8.1.2. Նախագահությունը համակարգում է բուհում գործող ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքը փոխադարձ վերահսկողության և գործընկերային մթնոլորտում, ապահովում տեղեկատվության շրջանառությունն ու համագործակցությունը դրանց միջև:

8.2.Ձևավորման կարգը

8.2.1. Նախագահության կազմը ձևավորվում է ի պաշտոնե, առանց լրացուցիչ ընտրության, ներառելով ուսանողական ինքնակառավարման համակարգի հետևյալ օղակների ղեկավարներին՝ (ձայնի իրավունքով)

- Ուսանողական խորհրդարանի նախագահը՝ որպես խորհրդի ղեկավար (նախագահ),

- Բուհում գործող բոլոր ուսանողական ինքնակառավարման մարմինների նախագահները՝ որպես անդամներ,

8.2.2. Նախագահության կազմում ձայնի իրավունքով կարող են ընդգրկվել միայն այն ինքնակառավարման մարմինների ղեկավարները, որոնք գործում են բուհում գրանցված և կանոնակարգով հաստատված կարգով:

8.2.3. Նախագահության կազմում սեփական դիմումի համաձայն առանց ձայնի իրավունքի կարող են ընդգրկվել փոխնախագահը, քարտուղարը, խմբային պատասխանատուները, ԵՊԲՀ քոլեջի ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից ընտրված ներկայացուցիչը:

8.2.3. Նախագահության կազմում նախագահի միջնորդությամբ առանց ձայնի իրավունքի կարող են ընգրկվել հրավիրյալ այլ անձինք:

8.3. Նախագահության լիազորությունները

8.3.1. Նախագահությունը ապահովում է Ուսանողական խորհրդարանի ընդունած որոշումների կատարումն ու դրանց իրականացումը բուհի ուսանողական ինքնակառավարման համակարգում:

8.3.2. Կազմակերպում է ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության համակարգումը՝ խուսափելով գործառութային կրկնությունից:

8.3.3. Ներկայացնում է Ուսանողական խորհրդարանին ուսանողական միջավայրում իրականացվող ընթացիկ գործունեության, նախաձեռնությունների և ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկություններ: Այդ թվում կարող է ներկայացնել առաջարկություններ ձևավորելու հստակ գործառութային աշխատանքային խմբեր ժամանակավոր գործունեությամբ:

8.3.4. Ապահովում է ուսանողական ծրագրերի հաստատումը, գնահատումը, ֆինանսական և նյութատեխնիկական աջակցությունը՝ սահմանված կարգերով և կարգավորումներով ապահովելով հավասար մասնակցային հնարավորություններ:

8.3.5. Մշակել և խորհրդարանի հաստատմանը ներկայացնել ուսանողական ինքնակառավարման համակարգի գործունեության հետ կապված, կառուցվածքային փոփոխություններ, ներքին կարգավորումներ:

8.4. Նախագահության նիստերի կազմակերպման կարգը

8.4.1. Նախագահության նիստերը գումարվում են առնվազն շաբաթը մեկ անգամ: Արտահերթ նիստերը գումարվում են նախագահի նախաձեռնությամբ կամ նախագահության անդամների առնվազն 1/3-ի պահանջով:

8.4.2. Նախագահության նիստը համարվում է իրավազոր, եթե ներկա է նախագահության անդամների կեսից ավելին: Քվորումի բացակայության դեպքում նիստը չի կարող կայանալ:

8.4.3. Խորհրդի նիստերը վարում է ուսանողական խորհրդարանի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ փոխնախագահը:

8.4.4. Ինքնակառավարման մարմինների ղեկավարները նիստին չներկայանալու դեպքում պարտավոր են նախապես տեղեկացնել Ուսանողական խորհրդարանի նախագահին և իրենց փոխարեն նշանակել փոխնախագահին՝ լիազորելով նրան ներկայացնելու տվյալ մարմնին:

8.4.5. Նիստերի օրակարգը նախապես կազմվում և տրամադրվում է անդամներին: Շտապ հարցերի դեպքում հնարավոր է օրակարգային լրացումներ:

8.4.6. Որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ՝ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդունված որոշումները ենթակա են պարտադիր կատարման, եթե դրանք չեն բողոքարկվում վերահսկիչ հանձնաժողով:

8.4.7. Յուրաքանչյուր նիստի ընթացքում կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է նախագահողի և քարտուղարի կողմից:

8.4.8. Նիստերի արձանագրությունները և ընդունված որոշումները պահվում են գրանցամատյանում և հասանելի են Ուսանողական խորհրդարանի անդամներին՝ պահանջի դեպքում:

8.5. Նախագահության անդամների պարտականություններ

8.5.1. Նախագահության անդամները պատասխանատու են նախագահության նիստերում հաստատված աշխատանքային պլանների և որոշումների կատարողականի համար:

8.5.2. Պարտավոր են նախագահությանը ներկայացնել ինքնակառավարման մարմնի գործունեության ընթացիկ հաշվետվությունները:

8.5.3. Համագործակցել ՈւԽ-ի և նախագահության մյուս անդամների հետ՝ համակարգելու ուսանողական կյանքի, կրթական միջավայրի և ինքնակառավարման գործընթացների զարգացումը:

8.6. Նախագահության անդամի լիազորությունների դադարեցման հիմքերը
8.6.1. Նախագահության անդամների լիազորությունները շարունակվում են այնքան ժամանակ, որքան նրանք զբաղեցնում են համապատասխան մարմնի նախագահի պաշտոնը: Նրանց լիազորությունները դադարում են ինքնակառավարման մարմնի ղեկավարի կարգավիճակի դադարեցման պահից:

8.6.2. Զգուշացում կամ կարգապահական միջոցներ կարող են կիրառվել՝ մեկ կամ մի քանի նիստերում անպատասխանատվություն ցուցաբերելու, քաղաքական/կրոնական քարոզչություն իրականացնելու,ապատեղեկատվություն տարածելու, նախագահության կողմից ընդունված որոշումների իրականացմանը խոչնդոտելու դեպքերում վերահսկիչ հանձնաժողովի որոշմամբ:

Հոդված 9. ՈՒսանողական ինքնակառավարման մարմիններ

9.1.Ընդհանուր բնութագիրը

9.1.1. Ուսանողական ինքնակառավարման մարմինները (ՈՒԻՄ) հանդիսանում են բուհի ուսանողական ինքնակառավարման համակարգի գործադիր՝ հստակ գործառութային միավորներ, որոնք ձևավորվում են ուսանողների նախաձեռնությամբ:

9.1.2. Ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեությունը հիմնված է ուսանողների ինքնուրույն նախաձեռնության, հավասար մասնակցային հնարավորությունների, թափանցիկության, հաշվետվողականության և համագործակցության սկզբունքների վրա:

9.1.3. Ուսանողական ինքնակառավարման մարմինները գործում են սույն կանոնակարգի, ուսանողական ինքնակառավարման համակարգի բարձրագույն օղակների (ուսանողական խորհրդարան, նախագահություն) կողմից հաստատված ներքին կարգավորումների և սեփական կանոնակարգերի հիման վրա և հաշվետու են ուսանողությանը՝ ըստ իրենց գործունեության ոլորտի:

3.1.4. Ինքնակառավարման մարմինը ճանաչվում է բուհի ուսանողական ինքնակառավարման համակարգի մաս՝նախագահության որոշմամբ:

9.2. Ինքնակառավարման մարմինը պետք է բավարարի հետևյալ չափանիշներին.

9.2.1. Ինքնակառավարման մարմինը ձևավորվում է մեկ հստակ նպատակ իրականացնելու համար, որը համապատասխանում է ուսանողական ինքնակառավարման համակարգի սույն կանոնադրությամբ սահմանած նպատակային ուղղություններին և չի հակասում ամրագրված սկզբունքներին: Նպատակին հասնելու համար մարմինը սահմանում է հստակ և չափելի խնդիրներ՝ որոնք հստակ ամրագրվում են իր ներքին կանոնակարգում:

9.2.2. Իր գործունեությամբ չի կրկնում արդեն գործող որևէ ինքնակառավարման մարմնի գործառույթները:

9.2.3. Ունի հստակ կառավարման կառուցվածք՝ ղեկավար, փոխնախագահ, քարտուղար, բաժիններ կամ հանձնախմբեր, ինչպես նաև այլ պատասխանատու պաշտոններ:

9.2.4. Ունենա գործունեության անընդհատությանը միտված հստակ ընթացակարգ: Ներկայացնի տարեկան գործողությունների պլան և հաշվետվություն:

9.2.5. Իրականացնի գործունեություն, որը նպաստում է ուսանողական կյանքի, կրթական միջավայրի և ինքնակառավարման համակարգի շարունակական զարգացմանը: Գործունեությունը պետք է խրախուսի նոր գաղափարների, նախագծերի և մեխանիզմների ներդրումը, որոնք ուղղված են ուսանողական միջավայրի շարունակական կատարելագործմանը:

9.2.6. Գործի մասնակցային և ժողովրդավար սկզբունքներով, ապահովի անդամակցության բաց և թափանցիկ համակարգ:

9.2.7. Չթույլատրի խտրական, զրպարտիչ, ապատեղեկատվական կամ էթիկապես ոչ ընդունելի վարքագիծ:

9.2.8. Սահմանի ուսանողական համայնքի հետ կապի, երկխոսության և արձագանքման հստակ մեխանիզմներ՝ ուսանողների առաջարկների և խնդիրների ներկայացման ու քննարկման համար, ըստ գործունեության ոլորտի :

9.2.9. Մարմինները պարտավոր են գործել համագործակցային միջավայրում՝ փոխադարձ հարգանքով, վստահությամբ և համերաշխությամբ: Իր գործունեության շրջանակում համագործակցելով ուսանողական ինքնակառավարման համակարգի մյուս մարմինների, բուհի կառավարման և վարչական ստորաբաժանումների, ինչպես նաև արտաքին գործընկեր կառույցների հետ:

9.2.10. Գործի ինքնուրույն և կրի պատասխանատվություն իր ընդունած որոշումների և դրանց հետևանքների համար: Յուրաքանչյուր մարմին ինքնուրույն է իր գործունեության ծրագրերի և որոշումների իրականացման հարցում, սակայն պարտավոր է հաշվետու լինել նախագահությանը և ուսանողությանը՝ներկայացնելով պարբերական հաշվետվություններ:

9.2.11. Ինքնակառավարման մարմնի անդամ կարող է դառնալ յուրաքանչյուր ուսանող՝ առանց խոչընդոտների՝ներկայացնելով անդամակցության գրավոր հայտ:Սակայն ձայնի իրավունք նոր անդամը ձեռք է բերում 3 նիստի ներկայանալու պարագայում կամ առավելագույնը 1 ամսվա ընթացքում:

9.2.12**.** Ինքնակառավարման մարմնի նախագահի և ենթակառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնները սահմանափակվում են

ժողովրդավարական ընտրություններով և ժամկետով՝ առավելագույնը երկու (2) տարի առանց վերընտրվելու հնարավորությամբ:

9.2.13. Ինքնակառավարման մարմնի նախագահը ի պաշտոնե ընդգրկվում է ուսանողական նախագահության կազմում:

9.2.14. Ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեությունը պետք է ապահովի ինստիտուցիոնալ շարունակականություն և փորձի փոխանցում հաջորդ կազմերին:

9.2.15. Ուսանողական ինքնակառավարման մարմինները ապահովում է նոր անդամների պատրաստման, առաջնորդական հմտությունների զարգացման և կառավարման մշակույթի ձևավորման գործընթացը:

9.2.16. Ինքնակառավարման մարմինը պարտավոր է ենթարկվել ուսանողության շրջանում քվեարկությամբ ընդունված որոշումներին, որոնք կայացվել են սահմանված կարգով (ներկայացուցչական են) և բուհի ուսանողական ինքնակառավարման համակարգի իրավասության շրջանակում:

9.3. Ինքնակառավարման մարմնի լիազորությունները

Ինքնակառավարման մարմինը՝ գործելով իր ներքին կանոնակարգի և սույն կանոնադրության հիման վրա, իրականացնում է հետևյալ լիազորությունները.

9.3.1. Իր գործունեության ոլորտում մշակում և իրականացնում է ծրագրեր և միջոցառումներ՝ ուղղված ուսանողական կյանքի, կրթական միջավայրի և ինքնակառավարման համակարգի լավարկմանը:

9.3.2. Ներկայացնում է իր ոլորտին առնչվող առաջարկություններ, դիրքորոշումներ և եզրակացություններ Ուսանողական խորհրդարանին և նախագահությանը՝ ուսանողական քաղաքականության ձևավորման և որոշումների ընդունման գործընթացներում:

9.3.3. Իր իրավունքների և պատասխանատվության սահմաններում հանդես է գալիս որպես ուսանողական համայնքի ներկայացուցիչ՝ իր ոլորտում արտահայտելով ուսանողների կարծիքը, առաջարկները և պահանջները:

9.3.4. Իր գործունեության շրջանակում կարող է նախաձեռնել աշխատանքային խմբերի, նախագծային թիմերի կամ հանձնախմբերի ձևավորում՝ կոնկրետ խնդիրների լուծման նպատակով:

9.3.5. Իր նախաձեռնությամբ կարող է համագործակցել բուհի կառավարման մարմինների, ամբիոնների, վարչական ստորաբաժանումների և արտաքին գործընկեր կազմակերպությունների հետ՝ իր ծրագրերի իրագործման համար:

9.3.6. Ուսանողական ինքնակառավարման մարմինն իրավասու է բուհի կառավարման բոլոր օղակներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն: Ստացված տեղեկատվությունը կարող է օգտագործվել միայն ուսանողական շահերի պաշտպանության և համակարգային բարելավման նպատակով՝ պահպանելով տվյալների գաղտնիությունը և բուհի ներքին կանոնակարգերը:

9.3.7. Իրականացնում է տեղեկատվական, վերլուծական և խորհրդատվական գործունեություն՝ ուսանողների իրազեկման, մասնակցության և պաշտպանվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:

9.3.8. Տարեկան հիմքով ներկայացնում է գործունեության հաշվետվություն նախագահությանը, ուսանողական խորհրդարանին, սովորողներին՝ իր ծրագրերի կատարողականի, անդամակցության և ազդեցության վերաբերյալ:

9.3.9. Կարող է հանդես գալ նոր առաջարկներով կամ ռազմավարական ուղղություններով՝ ուսանողական ինքնակառավարման համակարգի կատարելագործման և արդյունավետության բարձրացման նպատակով:

9.3.10. Ունի իրավունք ներկայացնել միջնորդություններ կամ զեկույցներ ՈՒԽ նախագահությանը՝ ներքին գործընթացների բարելավման, համագործակցության կամ կարգավորման հարցերով:

9.4. Ինքնակառավարման մարմնի կարգավիճակը և ձևավորման փուլերը

9.4.1. Ուսանողական ինքնակառավարման մարմնի գործունեությունը ենթադրում է հստակ ձևավորման փուլեր՝ ըստ հաստատման, կայացման և վերանայման աստիճանի:
ա) ուսանողական նախաձեռնություն,
բ) ինքնակառավարման մարմին (ժամանակավոր կարգավիճակով),
գ) հաստատված ինքնակառավարման մարմին (լիարժեք կարգավիճակով),
դ) վերակազմավորում,
ե) լուծարում:

9.4.2. **Ուսանողական նախաձեռնություն** է համարվում ուսանողների կողմից ձևավորված ոչ պաշտոնական խումբը, որը հանդես է գալիս հստակ գաղափարով կամ առաջարկությամբ՝ ուղղված բուհի ուսանողական կյանքի, կրթական միջավայրի կամ ինքնակառավարման համակարգի որևէ ոլորտի զարգացմանը:
9.4.3. Նախաձեռնությունը կարող է գրավոր դիմումով ներկայացվել նախագահությանը՝ կցելով.

- գործունեության նպատակը և խնդիրները,
- նախնական գործողությունների պլանը (այդ թվում ենթադրական ծրագրերը),
- անդամների ցուցակը (առնվազն 5 ուսանող),

- նախաձեռնության համակարգողի տվյալները:

9.4.4. Նախագահությունը 10 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է դիմումը և կազմում դրական կամ բացասական եզրակացություն:
9.4.5. Նախաձեռնությունը դրական եզրակացություն տալու դեպքում այն ստանում է ժամանակավոր գործելու իրավունք մինչև մեկ ուսումնական տարի ժամկետով՝ որպես «ժամանակավոր ինքնակառավարման մարմին»:

9.4.6. Նախաձեռնությունը մերժվելու դեպքում հայտը ներկայացրած անձանց տրվում է գրավոր բացատրություն որտեղ հստակ նշվում է պատճառը(ները): Մերժման պատճառ կարող են հանդիսանալ հետևյալ դեպքերը՝

- ներկայացված նախաձեռնության նպատակը կամ խնդիրները հակասում են բուհի կամ ուսանողական ինքնակառավարման համակարգի կանոնադրական սկզբունքներին,
- նախաձեռնության առաջարկվող գործունեությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն կրկնում է արդեն գործող որևէ ինքնակառավարման մարմնի գործառույթները,
- ներկայացված ծրագիրը չունի հստակ նպատակ, գործողությունների տրամաբանություն կամ իրագործելիություն,
- անդամների թիվը կամ ներկայացվածության չափանիշները չեն բավարարում սույն կանոնակարգով սահմանված նվազագույն պահանջներին,
- հայտում առկա է անճշտություն, բացթողում կամ կեղծ տվյալ,
- նախաձեռնության գործունեությունը կարող է պարունակել քաղաքական, կրոնական կամ կուսակցական քարոզչության տարրեր, ինչպես նաև խտրականություն կամ անպատշաճ վարքագծի դրսևորումներ:

9.4.7. Եթե ուսանողական նախաձեռնությունը կրկնում է գործող մարմնի գործառույթները, սակայն կարող է նպաստել տվյալ ուղղությամբ արդեն գործունեություն իրականացնող ինքնակառավարման մարմնի արդյունավետ աշխատանքին, նախագահությունը պարտավոր է կատարել համապատասխան ուղղորդումներ՝ ապահովելով անհրաժեշտ ռեսուրսներ և պայմաններ, որպեսզի նախաձեռնությունը իրականացվի որպես ծրագիր գործող ինքնակառավարման մարմնի շրջանակում:

9.4.8. Մերժման որոշումը կարող է բողոքարկվել նախաձեռնողների կողմից Վերահսկիչ հանձնաժողովին՝ ծանուցման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Վերջինս 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է քննարկել բողոքը և ներկայացնել եզրակացություն նախագահությանը:

9.4.9. Եթե բողոքարկման արդյունքում վերահսկիչ հանձնաժողովը եզրակացնում է, որ մերժման հիմքերը անհիմն են, նախագահությունը պարտավոր է նախաձեռնությանը տրամադրել ժամանակավոր կարգավիճակ՝ սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան:

9.4.10. Ինքնակառավարման մարմինները չեն կարող ստեղծվել կամ գործել բուհի վարչական մարմինների կողմից:

9.5. **Ինքնակառավարման մարմին (ժամանակավոր կարգավիճակով)**

9.5.1. Ժամանակավոր կարգավիճակը տրամադրվում է նախագահության որոշմամբ՝ առավելագույնը 1 տարով՝ մշտադիտարկման պայմանով:
9.5.2. Որոշումն ընդունելու պահից սկսած 30 օրվա ընթացքում տվյալ մարմնի ներկայացուցիչները օրինակելի ձևաչափով նախագահության հաստատման են ներկայացնում տվյալ ինքնակառավարման մարմնի ներքին կանոնակարգը սույն կանոնադրությանը համապատասխան:

9.5.3. Նախագահության կողմից կանոնակարգի հաստատումից հետո դրան համապատասխան կազմակերպվում է տվյալ ինքնակառավարման մարմնի նախագահի ընտրությունները: Ընտրված նախագահը հանդիսանում է նախագահության խորհրդի անդամ առանց քվոտայի իրավունքի:

9.5.4. Ժամանակավոր ինքնակառավարման մարմինը ի դեմս նախագահի պարտավորվում է՝

- գործել ուսանողական ինքնակառավարման համակարգի կանոնադրության և ներքին կանոնակարգին համապատասխան,
- ներկայացնում է տարեկան գործողությունների ծրագիր,
- անընդհատ կերպով ներկայացնում է ընթացիկ հաշվետվություն,
- պարտավոր է ապահովել նախագահության նիստերի որոշումների կատարումը, եթե դրանք չեն բողոքարկվում վերահսկիչ հանձնաժողով:

9.5.5. Ժամանակավոր կարգավիճակը տրվում է առավելագույնը մեկ տարի ժամկետով, որի ավարտին մարմինը պարտավոր է ներկայացնել գործունեության հաշվետվություն, որը պետք է ներառի՝

- իրականացված ծրագրերի, նախաձեռնությունների և միջոցառումների ամբողջական ցանկը և ուսանողի ակտիվության գնահատման համակարգի տվյալները (բավարար է հանդիսանում՝ մեկ կիսամյակի ընթացքում իրականացված առնվազն երեք ծրագիր կամ միջոցառում, կամ իր նախաձեռնությունների շրջանակում առնվազն հիսուն (50) ուսանողի ներգրավումը մեկ ուսումնական տարվա ընթացքում,)
- իր կողմից սահմանած տարեկան գործողությունների պլանի կատարողականությունը (բավարար է հանդիսանում առնվազն 80% կատարողականությունը)
- անդամակցության դինամիկան՝ տարվա ընթացքում գրանցված և մասնակցած անդամների քանակը, ինչպես նաև մասնակցության

պարբերականությունը,(բավարար է հանդիսանում 1 կիսամյակի ընթացքում 4 նիստի կազմակերպումը առկա, որոնց ներկա է անդամների առնվազն 1/3)

- ֆինանսական հաշվետվությունը՝ ստացված և ծախսված միջոցների (եթե առկա են) մանրամասներով և փաստաթղթային հիմնավորումներով,
- համագործակցության արդյունքները՝ այլ ինքնակառավարման մարմինների, բուհի ստորաբաժանումների կամ արտաքին կառույցների հետ իրականացված համատեղ նախաձեռնությունների նկարագրությամբ,(բավարար է հանդիսանում նվազագույնը 1 համագործակցային նախագիծը)
- գնահատում և վերլուծություն սեփական գործունեության ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ, ներառյալ առաջիկա տարվա բարելավման առաջարկները,
- ուսանողների հետ կապի և արձագանքման մեխանիզմների ամփոփում՝ ստացված առաջարկների, բողոքների կամ կարծիքների հիման վրա կատարված գործողությունների մասին,
- ապացույցներ կամ ցուցանիշներ գործունեության ազդեցության վերաբերյալ՝ բուհական միջավայրի, ուսանողական համայնքի կամ արտաքին գործընկերների մակարդակով:
- չունի ընթացիկ կարգապահական վարույթ կամ պատիժ, որը հավաստվում է վերահսկիչ հանձնաժողովի որոշմամբ,

9.5.6. Ներկայացված հաշվետվության հիման վրա նախագահությունը կայացնում է որոշում ձևավորելու լիարժեք կարգավիճակով ինքնակառավարման մարմին կամ դադարեցնելու տվյալ մարմնի գործունեությունը:

9.5.7. Ժամանակավոր կարգավիճակի ընթացքում անգործության, կանոնադրական, էթիկական կամ ֆինանսական խախտումների դեպքում նախագահությունը կարող է վերահսկիչ հանձնաժողով ներկայացնել միջնորդություն տվյալ մարմնի գործունեությունը դադարեցնելու մասին, եթե առկա են օբյեկտիվ հիմնավորումներ:

9.5.8. Մերժման որոշումը կարող է բողոքարկվել Վերահսկիչ հանձնաժողովին՝ ծանուցման պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Վերջինս 30 օրվա ընթացքում պարտավոր է քննարկել բողոքը և ներկայացնել եզրակացություն նախագահությանը:

9.5.9. Եթե բողոքարկման արդյունքում վերահսկիչ հանձնաժողովը եզրակացնում է, որ մերժման հիմքերը անհիմն են, նախագահությունը պարտավոր է նախաձեռնությանը տրամադրել կարգավիճակ՝ սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան:

9.6 Վերակազմավորում կամ լուծարում

9.6.1.Ինքնակառավարման մարմնի գործունեությունը կարող է դադարեցվել կամ վերակազմավորվել բացառապես այն դեպքում, երբ դրա համար առկա են օբյեկտիվ հիմնավորումներ:

9.6.2. Գործունեության դադարեցման կամ վերակազմավորման հիմքեր կարող են լինել՝

- Անգործության փաստը՝ մեկ ուսումնական տարվա ընթացքում որևէ ծրագիր կամ նախաձեռնություն չիրականացնելու դեպքում,
- Տարեկան հաշվետվության չներկայացումը սահմանված ձևաչափով և ժամկետներում
- Էթիկական կամ կարգապահական խախտումներ՝ որոնք լրջորեն վնասում են ուսանողական ինքնակառավարման հեղինակությանը վերահսկիչ հանձնաժողովի որոշմամբ,
- Գործառույթների կրկնություն՝ երբ մարմինը շեղվելով իր ներքին կանոնակարգերով սահմանած նպատակներից և խնդիրներից լիովին կամ մասնակիորեն կրկնում է որև այլ կառույցի գործունեությունը:
- Մարմնի կազմում առկա է անդամների թվի կտրուկ նվազում (հինգից պակաս ակտիվ անդամ), որի հետևանքով խաթարվում է մարմնի բնականոն գործունեությունը,
- Ֆինանսական կամ կազմակերպչական թափանցիկության խախտումներ, ինչպես նաև հաշվետվական տվյալների կեղծման փաստեր՝ հաստատված վերահսկիչ հանձնաժողովի կողմից,
- Գործունեության քաղաքականացում կամ կուսակցական, կրոնական կամ խտրական բնույթի գործունեություն իրականացնելը,
- Ուսանողների իրավունքների կամ հավասար մասնակցության հնարավորությունների խախտումը մարմնի կողմից,
- Բուհի կամ ուսանողական ինքնակառավարման համակարգի հեղինակությանը վնաս հասցնող գործողություններ, հայտարարություններ կամ հրապարակումներ,
- Ներքին կառավարման համակարգի խաթարում՝ մարմնի ղեկավարության կողմից լիազորությունների չարաշահման կամ անդամների նկատմամբ անհիմն սահմանափակումների դրսևորման հետևանքով:
- Մարմնի գործունեության շեղումը իր կանոնադրական նպատակներից՝ այն դեպքերում, երբ մարմինը փաստացի դադարում է ծառայել ուսանողական համայնքի ընդհանուր շահերին և սկսում է գործել մեկ անձի, խմբի կամ ղեկավարի անձնական, քաղաքական կամ շահադիտական հետաքրքրություններին համապատասխան:

9.6.3.Գործունեության դադարեցման կամ վերակազմավորման գործընթացը նախաձեռնվում է՝

- Տվյալ մարմնի կողմից (ինքնադադարեցում): Մարմնի կողմից իր գործունեության դադարեցման վերաբերյալ գրավոր որոշման ընդունումը անդամների 2/3-ի պահանջով,

- Նախագահության որոշմամբ, այն դեպքերում, երբ առկա են օբյեկտիվ ցուցանիշներ և փաստեր, որոնց հիման վրա մարմնին նախապես տրվել են գրավոր զգուշացումներ կամ նկատառումներ, սակայն սահմանված ժամկետներում դրանք չեն վերացվել կամ կրկնվել են:

9.6.4. Որոշումն ընդունվելու պահից դրա մասին ծանուցվում են ինքնակառավարման համակրգի բոլոր անդամները: Եթե որոշումը 30 օրվա ընթացքում չի բողոքարկվում վերահսկիչ հանձնաժողով այն համարվում է ուժի մեջ մտած:

9.6.5. Վերակազմավորում է համարվում ինքնակառավարման մարմնի ներքին կանոնակարգի փոփոխությունը, որն իրականացվում է տվյալ մարնի գործունեության արդյունավետության բարձրացման, գործառույթների հստակեցման նպատակով՝ առանց մարմնի գործունեությունը դադարեցնելու:

9.6.6. Վերակազմավորման անհրաժեշտությունը կարող է առաջանալ հետևյալ դեպքերում.

1. Մարմնի գործունեությունը մասամբ չի ապահովում իր նպատակային խնդիրների կատարողականը կամ պահանջում է կառուցվածքային հստակեցում:
2. Մարմնի գործառույթները չեն համապատասխանում ժամանակի պահանջներին կամ ուսանողական համայնքի նոր ձևավորված կարիքներին:
3. Առկա են ներքին կառավարման կամ հաղորդակցման խնդիրներ, որոնք խոչընդոտում են գործունեության շարունակականությանը:
4. Անհրաժեշտ է գործունեության ընդլայնում՝ նոր բաժինների, հանձնախմբերի կամ ծրագրերի ձևավորմամբ:
5. Նախորդ հաշվետու շրջանի ընթացքում արձանագրվել են կառուցվածքային թերացումներ կամ կրկնվող գործառույթներ այլ մարմինների հետ:
6. Նախագահության կամ վերահսկիչ հանձնաժողովի կողմից տրված նկատառումները պահանջում են կառուցվածքային կամ գործառութային վերանայում:

9.6.7. Վերակազմավորման ռազմավարությունը ներկայացվում է տվյալ մարմնի կողմից: Վերակազմավորման առաջարկին կցվում են.

- փոփոխությունների հիմնավորումն ու նպատակը,
- նախատեսվող նոր կառուցվածքը և գործառույթները,
- անցումային պլանը՝ գործող ծրագրերի շարունակականությունը ապահովելու համար:

9.6.8. Վերակազմավորման գործընթացը պետք է ավարտվի առավելագույնը 30 աշխատանքային օրվա ընթացքում**,** որը կարող է երկարացվել ևս 10 աշխատանքային օրով՝ նախագահության հիմնավոր որոշմամբ:

9.6.9. Վերակազմավորման գործընթացը համարվում է ավարտված, եթե նախագահության կողմից հաստատվում է տվյալ մարմնի նոր կանոնակարգը, որոշումը ընդունվում է նախագահության քվեարկությամբ՝ պարզ մեծամասնությամբ:

9.6.10. Վերակազմավորման արդյունքում ինքնակառավարման մարմնի նոր կանոնակարգը և աշխատելաոճը չպետք է հակասեն սույն կանոնադրությամբ սահմանված պահանջներին:

9.6.11. Վերակազմավորման գործընթացի ընթացքում մարմինը շարունակում է գործել իր նախորդ (գործող) ներքին կանոնակարգով և պահպանում է իր կարգավիճակը մինչև վերակազմավորման գործընթացի ավարտը,
բացառությամբ այն դեպքերի, երբ նախագահության որոշմամբ սահմանվում է այլ կարգ՝ հաշվի առնելով կոնկրետ հանգամանքները կամ վերահսկիչ հանձնաժողովի առաջարկությունը:

9.6.12. Ինքնակառավարման մարմնի լուծարում է համարվում նրա գործունեության լիարժեք դադարեցումը՝ որպես ուսանողական ինքնակառավարման համակարգի ենթակառույցի, ինչի արդյունքում մարմինը կորցնում է իր լիազորությունները, կարգավիճակը և ներկայացուցչական իրավունքը:

9.6.13. Լուծարման պահից մարմնի բոլոր իրավական և ֆինանսական պարտավորությունները դադարում են, իսկ ընթացիկ ծրագրերը կարող են փոխանցվել նախագահության որոշմամբ այլ գործող ինքնակառավարման մարմնի կամ աշխատանքային խմբի:

9.6.14. Լուծարված մարմնի անվանումը, խորհրդանիշները (լոգո, նշան, կարգախոս և այլ նույնացուցիչ տարրեր), ինչպես նաև նրա կողմից նախկինում օգտագործված պաշտոնական էլեկտրոնային հասցեները և հաղորդակցման հարթակները չեն կարող կրկին օգտագործվել կամ գրանցվել որևէ այլ խմբի, նախաձեռնության կամ հասարակական կազմակերպության կողմից առանց նախագահության գրավոր համաձայնության:

9.7. Ուսանողական ինքնակառավարման մարմնի անդամի իրավունքները

9.7.1. Մասնակցել իր մարմնի գործունեությանը որոշումների ընդունմանը՝ լիիրավ ձայնի իրավունքով:

9.7.2. Ներկայացնել առաջարկներ, դիտարկումներ և նախագծեր՝ ուղղված ուսանողական կյանքի, կրթական միջավայրի կամ ինքնակառավարման համակարգի բարելավմանը:

9.7.3. Ներկայացնել ծրագրային առաջարկներ (դրա ընդունման կամ մերժման վերաբերյալ ստանալ գրավոր բացատրություններ) ՝ տվյալ մարմնի նպատակների և լիազորությունների շրջանակում:

9.7.4. Լինել նախաձեռնության հեղինակ և ցանկության դեպքում հեղինակային իրավունքից ելնելով իրականացնել դրա ղեկավարումը՝ ապահովելով հավասար մասնակցության և թափանցիկության սկզբունքները:

9.7.5. Ընդգրկվել այլ ծրագրերի կազմակերպման ղեկավարման աշխատանքներին այդ թվում նայև այլ մարմինների կողմից իրականացվող ծրագրերին:

9.7.6.Ստանալ ամբողջական և ժամանակին տեղեկատվություն իր մարմնի գործունեության, որոշումների, ծրագրերի և ֆինանսական միջոցների օգտագործման մասին:

9.7.7.Ստանալ խորհրդատվություն և աջակցություն բուհի և ՈՒԽ-ի կողմից իր նախաձեռնությունների իրականացման համար:

9.7.8. Ներկայացնել իր կարծիքը ուսանողական ինքնակառավարման աշխատանքների, որոշումների կամ նախագծերի վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում բողոքարկել դրանք վերահսկիչ հանձնժողով սահմանված կարգով պահպանելով էթիկական նորմերը:

9.7.9.Օգտվել բուհի տրամադրած ռեսուրսներից (տարածք, տեխնիկա, տեղեկատվական հարթակներ և այլն)՝ իր մարմնի կամ նախաձեռնության նպատակների շրջանակում:

9.7.10. Առաջադրվել և ընտրվել ուսանողական ինքնակառավարման համակարգի ղեկավար պաշտոններում, բացառությամբ՝ վերահսկիչ հանձնաժողովի:

9.7.11. Համապատասխան ընթացակարգերի անդամակցել բուհի կառավարման օղակներին չշեղվելով ուսանողների լավագույն շահերը ներկայացնելու իր առաքելությունից:

9.7.12. Ցանկության դեպքում հրաժարվել անդամակցությունից՝ գրավոր դիմումով՝ պահպանելով ընթացակարգային կանոնները:

9.7.13. Հավակնել և սահմանված կարգով ստանալ պարգևատրումներ և խրախուսման միջոցներ՝ կատարած ներդրման համապատասխան:

9.8. Ուսանողական ինքնակառավարման մարմնի անդամի պարտականությունները

9.8.1. Իր գործունեությունը իրականացնել սույն կանոնադրության, ինքնակառավարման համակարգի կարգավորումների, տվյալ մարմնի ներքին կանոնակարգին և էթիկական նորմերին համապատասխան:

9.8.2. Պարտաճանաչ կերպով ապահովել իր մասնակցությունը մարմնի նիստերին, նախաձեռնություններին և ծրագրերին՝ չհետաձգելով կամ չխոչընդոտելով դրանց ընթացքը: Հետևել իր կողմից ստանձնած պարտականությունների կատարմանը՝ ապահովելով բարձր պատասխանատվություն և նախաձեռնողականություն:

9.8.3. Պահպանել բուհի և ուսանողական ինքնակառավարման հեղինակությունը՝ զերծ մնալով գործողություններից, որոնք կարող են վնասել դրանց իմիջը:

9.8.4. Իր նախաձեռնությունները և ծրագրերը իրականացնել թափանցիկ և հաշվետու ձևով՝ ներկայացնելով իրականացված աշխատանքների և արդյունքների մասին

տեղեկություններ:
9.8.5.Նպաստել թիմային աշխատանքի արդյունավետությանը՝ հարգելով բազմակարծությունը և գործընկերային հարաբերությունները: Նպաստել բուհի ուսանողական համայնքի համերաշխության և համագործակցության զարգացմանը:

9.8.6. Չօգտագործել ինքնակառավարման հարթակները քաղաքական, կրոնական կամ անձնական նպատակներով:

9.8.7. Պահպանել ներքին փաստաթղթերի գաղտնիությունը՝ առանց ղեկավարության կամ նախագահության թույլտվության չհրապարակել ներքին բնույթի տեղեկատվություն:
9.8.9. Մասնակցել ուսանողի ակտիվության գնահատման համակարգին՝ ապահովելով իր ներգրավվածությունն ու գործունեության փաստացի արձանագրումը սահմանված կարգով:

9.8.10. Պատասխանատվություն կրել իր գործողությունների կամ անգործության հետևանքով առաջացած վնասների կամ խախտումների համար:

9.8.11. Խնամքով վերաբերվել բուհի, ուսանողական ինքնակառավարման մարմինների և այլ ուսանողական կառույցների կողմից տրամադրված գույքին, նյութական և ֆինանսական միջոցներին՝ ապահովելով դրանց նպատակային օգտագործումը և պահպանությունը:

9.9. Ինքնակառավարման մարմնի ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները

9.9.1. Ինքնակառավարման մարմնի ղեկավարը հանդիսանում է տվյալ մարմնի բարձրագույն ներկայացուցիչ և պատասխանատու: Իրավասու է ներկայացնել մարմինը բուհի, ուսանողական խորհրդարանի, ինչպես նաև արտաքին կառույցների և կազմակերպությունների առջև:

9.9.2. Իրականացնել մարմնի ընդհանուր ղեկավարությունը՝ ապահովելով դրա արդյունավետ և շարունակական գործունեությունը: Կազմակերպել և նախագահել մարմնի նիստերը, ստորագրել արձանագրությունները և ընդունված որոշումները:

9.9.3. Պարտավոր է ենթարկվել ինքնակառավարման մարմնի նիստերում քվեարկությամբ կայացված որոշումներին՝ անկախ անձնական դիրքորոշումից:

9.9.4. Վերահսկել մարմնի ենթակառուցվածքների (հանձնախմբեր, բաժիններ, ծրագրային խմբեր) բնականոն գործունեությունը՝ ապահովելով դրանց արդյունավետ աշխատանքը, անհրաժեշտ կազմակերպչական, տեղեկատվական և նյութական ռեսուրսներով:

9.9.5. Սահմանված կարգով ստանալ անհրաժեշտ աջակցություն, տեղեկատվություն և ռեսուրսներ՝ բուհի և նախագահության կողմից իր մարմնի ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Խորհրդակցել ՈՒԽ-ի, նախագահության և վերահսկիչ հանձնաժողովի հետ՝ մարմնի գործունեության, ֆինանսական և էթիկական հարցերի վերաբերյալ:

9.9.6. Իր լիազորությունների սահմաններում ընդունել որոշումներ՝ առանց վերադաս մարմինների հաստատման, եթե դրանք չեն հակասում սույն կանոնակարգին:

9.9.7. Միջնորդել անդամներին խրախուսման, պարգևատրության կամ բարձր գնահատման համար՝ ըստ գործունեության արդյունքների:

9.9.8. Պարտավոր է ապահովել մարմնի գործունեության թափանցիկությունը, ապահովել հաշվետվողականություն ուսանողական խորհրդարանին, նախագահությանը և ուսանողական հանրության առջև: Պատրաստել և ներկայացնել մարմնի տարեկան գործունեության հաշվետվությունը սահմանված ժամկետներում:

9.9.9.Պարտավոր է սպասարկել բուհի և ուսանողական ինքնակառավարման ընդհանուր շահը՝ խուսափելով անհատական կամ խմբային շահերի սպասարկումից: Հետևել էթիկական և կարգապահական նորմերի պահպանմանը մարմնի ներսում՝ կանխելով շահերի բախում կամ անարդար վերաբերմունք:

9.9.10. Նպաստել ուսանողների ներգրավվածությանը, նոր անդամների ներգրավմանն ու նրանց կարողությունների զարգացմանը:

9.9.11. Պատասխանատվություն կրել մարմնի անունից արված հայտարարությունների, հրապարակումների և որոշումների համար:

9.9.12. Պատասխանատու կերպով մասնակցել նախագահության նիստերին՝ ներկայացնելով իր մարմնի շահերն ու դիրքորոշումը, ապահովելով կառուցողական քննարկում և համագործակցություն, ինչպես նաև չխոչընդոտել նախագահության աշխատանքների բնականոն ընթացքին և ընդունված որոշումների իրականացմանը:

9.9.13. Համագործակցել ուսանողական խորհրդարանի նախագահի, փոխնախագահի և մյուս մարմինների ղեկավարների հետ՝ ապահովելով համակարգային կապը:

9.9.14.Պարտավոր է ապահովել ուսանողների հետ կապի, դիմումների ընդունման և արձագանքման հստակ մեխանիզմների մատչելի միջավայր:

9.9.15. Պահպանել ֆինանսական միջոցների նպատակային և թափանցիկ օգտագործումը՝ համաձայն հաստատված ծրագրերի:Խախտումների կամ անարդյունավետության դեպքերում պարտավոր է ձեռնարկել համապատասխան կազմակերպչական կամ կարգապահական միջոցներ:

9.9.16.Ուսանողը չի կարող միաժամանակ ղեկավարել մեկից ավելի ինքնակառավարման մարմիններ:

9.10. **Ինքնակառավարման մարմնի ղեկավարի լիազորությունները կարող են դադարեցվել հետևյալ հիմքերով՝**

9.10.1. Ինքնակամ հրաժարականով
• ղեկավարի կողմից ներկայացված գրավոր դիմումով՝ հասցեագրված ուսանողական խորհրդարանի նախագահությանը,
• հրաժարականը ուժի մեջ է մտնում դիմումը ներկայացնելուց 10 աշխատանքային օր հետո:

9.10.2. Ուսանողի կարգավիճակի դադարեցմամբ
• ղեկավարի լիազորությունները դադարեցվում են, եթե նա դադարում է ունենալ բուհի ուսանողի կարգավիճակ կամ գտնվում է ակադեմիական արձակուրդում:

9.10.3. Համակարգային անգործության պարագայում նախագահության որոշմամբ՝
• մեկ ուսումնական կիսամյակի ընթացքում հաստատված գործողությունների պլանի 50%-ից պակաս կատարողականության դեպքում,
• անդամների կամ նախագահության կողմից արձանագրված համակարգային անգործության կամ պարտականությունների չկատարման փաստերի առկայությամբ, ուսանողի ակտիվության գնահատման համակարգում ունենա առնվազն միջին ակտիվություն:

9.10.4 Էթիկական կամ կարգապահական խախտմամբ վերահսկիչ հանձնաժողովի որոշմամբ պարտականությունների չկատարման իրավունքների չարաշահման պարագայում
• Բուհի կարգապահական կամ էթիկայի հանձնաժողովի որոշմամբ՝ հաստատված խախտման դեպքում,
• Ուսանողական ինքնակառավարման հեղինակությանը վնաս հասցնող վարքագծի դեպքում:
• Քաղաքական կամ կրոնական գործունեության իրականացման դեպքում, եթե ղեկավարը օգտագործում է իր պաշտոնական դիրքը քաղաքական կամ կրոնական քարոզչության, ապատեղեկատվության տարածման կամ խմբային շահերի սպասարկման նպատակով:
• Ֆինանսական կամ կազմակերպչական չարաշահման դեպքում՝ ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործման, հաշվետվությունների թաքցման կամ փաստաթղթերի կեղծման դեպքերում:

9.10.5. Անդամների անվստահությամբ առնվազն ձայնի իրվունք ունեցող անդամների կեսից ավելի գրավոր նախաձեռնությամբ:

9.10.6. Ինքնակառավարման մարմնի նախագահի լիազորությունների դադարեցման պահից սկսած 30 օրյա ժամկետում սահմանված ընթացակարգին համապատասխան կազմակերպվում է տվյալ ինքնակառավարման մարմնի նախագահի ընտրությունները:

9.10.7. Լիազորությունների դադարեցման պահից մինչև նոր ղեկավարի ընտրությունը, մարմնի ղեկավարի պարտականությունները կատարում է նախագահության կողմից նշանակված ժամանակավոր պաշտոնակատարը (ԺՊ): ԺՊ-ի նշանակումն իրականացվում է հետևյալ սկզբունքով՝ տվյալ մարմնի անդամների շարքից ուսանողի ակտիվության գնահատման համակարգում 5 ամենաբարձր միավոր ունեցող ուսանողներից մեկը:

9.11. Ինքնակառավարման մարմնի գործունեության հաշվետվողականության և վերահսկողության համակարգը

9.11.1. Ինքնակառավարման մարմինների հաշվետվողականության համակարգը նպատակ ունի ապահովել դրանց գործունեության թափանցիկությունը, արդյունավետությունը և ուսանողական համայնքի առջև հաշվետու լինելը: Վերահսկողությունն իրականացվում է ուսանողական խորհրդարանի, նախագահության, վերահսկիչ հանձնաժողովի, բուհի ղեկավարության կողմից՝ համաձայն սույն կանոնակարգի:

9.11.2. Յուրաքանչյուր ինքնակառավարման մարմին պարտավոր է ներկայացնել գործունեության հաշվետվություն՝ տարեկան առնվազն մեկ անգամ:
Տարեկան հաշվետվությունը պարտադիր պետք է ներառի՝

- իրականացված ծրագրերի և միջոցառումների բովանդակային նկարագրերը,
- ծրագրերի իրականացման ցուցանիշները (մասնակիցների թիվ, բալային արժեքները ըստ ուսանողի ակտիվության գնակատման համակարգի օբյեկտիվ ցուցիչների, բյուջե և այլն),
- իրենց ներքին կանոնակարգով սահմանված նպատակների և խնդիրների կատարման աստիճանը և ծրագրերի համապատասխանությունը դրանց,
- ֆինանսական միջոցների օգտագործման հաշվետվությունը,
- ուսանողների հետադարձ արձագանքման և համագործակցության արդյունքները,
- առաջարկություններ հաջորդ տարվա գործունեության բարելավման ուղղությամբ:

9.11.3. Հաշվետվությունը ներկայացվում է նախագահության կողմից հաստատված ժամկետում ամբողջ ուսանողությանը,իսկ գրավոր ձևաչափով այն հրապարակվում է ինքնակառավարման համակարգի պաշտոնական հարթակներում:

9.11.4. Անհրաժեշտության դեպքում վերահսկող մարմինները կարող են պահանջել միջանկյալ հաշվետվություն (կիսամյակային կամ թեմատիկ ձևաչափով):

9.11.5. Ինքնակառավարման մարմնի տարեկան հաշվետվության հիման վրա վերահսկող մարմինները կարող են ներկայացնել տվյալ մարմնի գործունեության վերաբերյալ գնահատական, առանձնացված հատուկ կարծիքներ,նկատառումներ:

9.11.6. Վերահսկիչ հանձնաժողովը կարող է կազմակերպել դիտարկումներ, հարցումներ կամ ուսանողական կարծիքի ուսումնասիրություններ՝ մարմինների աշխատանքի գնահատման նպատակով:

9.11.7. Վերահսկող մարմինների կողմից տրված անբավարար գնահատականի հիման վրա, վերահսկիչ հանձնաժողովը կարող է սահմանել կարգապահական տույժեր, այդ թվում՝ տվյալ մարմնի ղեկավարի լիազորությունների դադարեցում նոր ընտրությունների կազմակերպում:

9.11.8. Ուսանողները կարող են ներկայացնել գրավոր դիտարկումներ կամ առաջարկություններ հաշվետվությունների վերաբերյալ՝նախագահությանը կամ վերահսկիչ հանձնաժողովին: Նախագահությունը և վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է ապահովել արձագանքման և հետադարձ կապի հստակ մեխանիզմ՝ ապահովելով ուսանողական կարծիքի ազդեցությունը համակարգի բարելավման վրա:

Հոդված 10. Վերահսկիչ հանձնաժողով

10.1.1. Վերահսկիչ հանձնաժողովը հանդիսանում է ուսանողական ինքնակառավարման համակարգի անկախ վերահսկող մարմինը, որը ապահովում է համակարգի գործունեությունը համապատասխան ՀՀ օրենսդրությանը, բուհի կանոնադրությանը, սույն կանոնակարգին, ինքնակառավարման համակարգի ներքին կարգավորումներին:

10.2. Ձևավորման կարգը

10.2.1. Վերահսկիչ հանձնաժողովը ձևավորվում է ինքնաառաջադրման սկզբունքով:Առաջադրվել կարող են այն անձինք,ովքեր նախկինում ունեցել են ԵՊԲՀ ուսանողական ինքնակառավարման համակարգում ղեկավար պաշտոն՝ նախագահ, ով ծավալել է նվազագույնը 1 տարվա գործունեություն, սակայն տվյալ պահին որևէ պաշտոնական կարգավիճակ չունեն ինքնակառավարման համակարգի որևէ մարմնում:

10.2.2. Վերահսկիչ հանձնաժողովի անդամը կարող է չունենալ ուսանողի կարգավիճակ:

10.2.3.Ինքնաառաջադրված թեկնածուները գրավոր դիմումով ներկայացնում են իրենց թեկնածությունը նախագահությանը: Նախագահությունը սահմանված ժամկետում ճշտում է անձի տվյալների հավաստիությունը և ձևավորում կազմը:

10.2.4 Նախագահությունը սահմանում է դիմումների ներկայացման ժամկետ նախորդ գումարման վերահսկիչ հանձնաժողովի լիազորությունների ավարտից առնվազն 2 ամիս առաջ:

10.2.5. Վերահսկիչ հանձնաժողովը չունի անդամակցության քանակական սահմանափակում:

10.2.6. Անձինք, որոնք առաջադրվում են 2 տարվա ժամկետով՝ և չունենվերաառաջադրվելու հնարավորությամբ:
10.2.7. Հանձնաժողովի կազմի մեջ չեն կարող ընդգրկվել անձինք, որոնք՝ հեռացվել են ինքնակառավարման համակարգի զբաղեցրած պաշտոնից կարգապահական վարույթով:

10.2.8. Վերահսկիչ հանձնաժողովը իր առաջին նիստում իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար՝ պարզ մեծամասնությամբ:

10.2.9. Վերահսկիչ հանձնաժողովում այն անդամների թիվը, ովքեր համարվում են նաև հիմնադրամի աշխատակից, չպետք է գերազանցի կազմի ընդհանուր անդամների 25%:

10.3. Վերահսկիչ հանձնաժողովի լիազորությունները

Վերահսկիչ հանձնաժողովը՝
10.3.1. Վերահսկում է ուսանողական ինքնակառավարման համակարգի մարմինների գործունեության օրինականությունը, արդյունավետությունը և թափանցիկությունը:
10.3.2. Ուսումնասիրում է բողոքներ, դիմումներ, միջնորդություններ և հաղորդումներ՝ կապված ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության կամ անդամների իրավունքների խախտման դեպքերի հետ:
10.3.3. Կարող է նախաձեռնել ներքին քննություններ կամ դիտարկումներ՝ սեփական նախաձեռնությամբ կամ նախագահության, խորհրդարանի կամ ուսանողության պահանջով:
10.3.4. Իրավասու է պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ բոլոր ուսանողական ինքնակառավարման միավորներից՝ սահմանված ժամկետում:
10.3.5. Իրականացնում է պարբերական դիտարկումներ ուսանողական ինքնակառավարման համակարգի ընդհանուր արդյունավետության վերաբերյալ և ներկայացնում բարելավման առաջարկություններ:
10.3.6. Տարեկան հիմքով կազմում և ներկայացնում է համապարփակ զեկույց՝ ներառելով դիտարկումների արդյունքները, արձանագրված խախտումները և առաջարկությունները:

10.3.7. Հանձնաժողովի կողմից որոշումների ընդունումը կատարվում է անդամների ձայների պարզ մեծամասնության հաշվով:

10.4. Վերահսկիչ հանձնաժողովի իրավական գործիքակազմը

Վերահսկիչ հանձնաժողովը, իր լիազորությունների շրջանակում, կարող է իրականացնել հետևյալ գործողությունները.

10.4.1. Առաջարկություն

Հանձնաժողովը կարող է ներկայացնել առաջարկություններ՝ ուղղված ուսանողական ինքնակառավարման համակարգի բարելավմանը, կարգավորումների կատարելագործմանը կամ գործունեության արդյունավետության բարձրացմանը:
Այս առաջարկությունները.

- ունեն խորհրդատվական բնույթ,
- կարող է ձևավորվել սյուբյեկտիվ դիտարկումների հիման վրա,
- ուղարկվում են համապատասխան մարմիններին կամ նախագահությանը,
- ենթակա են պարտադիր արձագանքման այն օղակի կողմից որին ուղված են:

10.4.2. Եզրակացություն

Հանձնաժողովը կարող է կազմել եզրակացություն՝ հիմնվելով փաստերի, նյութերի և վերլուծության վրա: Եզրակացությունը կարող է լինել.
ա) դրական՝ հաստատելով, որ խախտումներ չեն արձանագրվել,
բ) բացասական՝ արձանագրելով խախտումներ և առաջարկելով կարգապահական կամ կազմակերպչական արձագանք:
Եզրակացությունը.

- չի հանդիսանում պատժիչ ակտ,
- օգտագործվում է որպես փաստական հիմք նախագահության կամ խորհրդարանի որոշումների ընդունման համար,
- բացասական եզրակացության դեպքում այն պարտադիր ենթակա է արձագանքման տվյալ մարմնի կողմից, որի վերաբերյալ այն տրվել է :

10.4.3. Քննական որոշում (պարտադիր կատարման ենթակա)

Խախտումների, համակարգային անգործության կամ կանոնադրական պահանջների խախտման փաստերի դեպքում, ուսանողների դիմումների հիման վրա վերահսկիչ հանձնաժողովը կարող է կայացնել քննական որոշում, որը պարտադիր է կատարման համար:

Քննական որոշումները կարող են վերաբերվել հետևյալ դեպքերին.
• ֆինանսական, էթիկական կամ կարգապահական խախտումներ,
• ուսանողական իրավունքների և հավասար մասնակցության և խրախուսման սկզբունքների խախտում,
• ուսանողական մարմնի գործունեության, անգործություն կամ լիազորությունների չարաշահում դեպքերին:

Քննական որոշմամբ հանձնաժողովը կարող սույն կանոնադրության և ներքին կարգավորումների համապատասխան կայացնել հետևյալ որոշումները

- պարտավորեցնել տվյալ մարմնին կամ պաշտոնատար անձին վերացնել հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետում,
- տվյալ ինքնակառավարման մարմնի ղեկավարի լիազորությունների դադարեցում և ընտրությունների նշանակում,
- մարմնի վերակազմավորման կամ լուծարման,
- կարգապահական տույժերի սահմանմանում այդ թվում նաև ռեսուրսների օգտագործման արգելք:

Քննական որոշումները ենթակա են պարտադիր կատարման**:**

10.4.4. Միջնորդություն

Վերահսկիչ հանձնաժողովը կարող է ներկայացնել միջնորդություն այն դեպքերում, երբ իր կողմից ընդունված որոշումները կամ տրված հանձնարարականները չեն կատարվել սահմանված ժամկետներում կամ կատարվել են ոչ պատշաճ ձևով:

Միջնորդությունը կարող է պարունակել հանձնաժողովի կողմից արձանագրված խախտումների մանրամասն նկարագրությունը, չկատարման պատճառների վերլուծությունը և առաջարկվող միջոցառումները:

Միջնորդությունը ներկայացվում է.
• Ուսանողական ինքնակառավարման համակարգի բարձրագույն օղակներին (ՈՒԽ և նախագահություն),
• Բուհի ղեկավարության և կառավարման խորհուրդներին:

10.5. Գործունեության սկզբունքները

10.4.1. Անկախություն և անաչառություն:
10.4.2. Օբյեկտիվություն և փաստարկվածություն՝ հիմնվելով բացառապես փաստական տվյալների վրա:
10.4.3. Թափանցիկություն՝ որոշումների հրապարակայնության ապահովում ուսանողական հանրության համար:
10.4.4. Գաղտնիության պահպանում՝ անձնական տվյալների և ներքին քննարկումների նկատմամբ:

10.6. Հաշվետվություն և հրապարակայնություն

10.6.1. Վերահսկիչ հանձնաժողովը տարեկան առնվազն մեկ անգամ ներկայացնում է գործունեության հաշվետվություն:
10.6.2. Հաշվետվությունը հրապարակվում է ուսանողական ինքնակառավարման

պաշտոնական հարթակներում՝ ապահովելով ուսանողների իրազեկումը:
10.6.3. Անհրաժեշտության դեպքում կարող է հրապարակել թեմատիկ կամ միջանկյալ հաշվետվություններ՝ առանձին դիտարկումների կամ կարևոր որոշումների վերաբերյալ:

Հոդված 11.Կառավարման ձևերը ուսանողական ինքնակառավարման համակարգում

11.1. Ուսանողական ինքնակառավարման համակարգում կարող են գործել հետևյալ կառավարման ձևերը.
ա) Խորհրդարանական կառավարում**,**
բ) Խորհրդի ձևաչափով կառավարում**:**

11.2. Խորհրդարանական կառավարման ձևը գործում է այն դեպքում, երբ ձևավորված է ուսանողական խորհրդարան: Սա կառավարման լիակարտար տարբերակն է: Խորհրդարանական այս դեպքում հանդիսանում է համակարգի բարձրագույն մարմին, իսկ Ուսանողական խորհրդարանի նախագահը համակարգի ղեկավարն ու պատասխանատուն:

11.3.1. Խորհրդի ձևաչափով կառավարմը գործում է միայն այն դեպքում, երբ ուսանողական խորհրդարանը որևէ պատճառներով չի ձևավորվել կամ լուծարվել է: Այս պարագայում համակարգի բարձրագույն ղեկավար մարմինը Ուսանողական խորհուրդն է՝նախագահությունը:

11.3.2. Խորհրդարանի չձևավորման պարագայում, նախագահության կազմից ընտրվում է ուսանողական խորհրդի նախագահ, խորհրդի անդամների կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

11.3.3. Խորհրդի ձևաչափով կառավարման դեպքում խորհրդի նախագահը ընտրվում է 1 տարի ժամկետով առանց վերընտրման հնարավորությունների: Նախագահի թեկնածու կարող է հանդիսանալ նախագահության կազմի այն անդամը ով ունի ձայնի իրավունք:

11.4.4.Խորհրդի նախագահի լիազորությունները դադարեցվում են հետևյալ դեպքերում:

11.4.4.2. Այն պահին երբ ձևավորվում է ներկայացուցչական մարմինը՝ խորհրդարանը:

11.4.4.2. Սեփական դիմումի համաձայն:

11.4.4.3.Եթե դադարում է ունենալ ուսանողի կարգավիճակ:

11.4.4.4. Վերահսկիչ հանձնաժողովի որոշմամբ հետևյալ դեպքերում՝

- նախագահի կողմից իր պարտականությունների կրկնակի կամ համակարգային չկատարման, ինչպես նաև ֆինանսական միջոցների ոչ նպատակային օգտագործման դեպքում:
- քաղաքական, կրոնական կամ կուսակցական քարոզչության իրականացման, ինչպես նաև ապատեղեկատվություն տարածելու կամ համալսարանի հեղինակությանը վնաս հասցնելու դեպքերում:
- դիտավորությամբ որևէ ինքնակառավարման մարմնի գործունեության անհիմն խոչընդոտման պարագայում:
- ուսանողական ինքնակառավարման համակարգում ընդգրկված ուսանողների օրենքով սահմանված հնարավորությունների սահմանափակման, անարդար մասնակցային հնարավորությունների ստեղծման, հասանելիք խրախուսումների տրմադրմանը խոչընդոտելու դեպքերում
- նախագահության անդամների առնվազն 2/3-ի կողմից անվստահություն հայտնելու պարագայում: Այս դեպքում վերահսկիչ հանձնաժողով է ներկայացվում դիմում որտեղ հստակ նշված է պատճառը(ները):
- երբ խորհրդի նախագահը դիտավորությամբ խոչնդոտում է ներկայացուցչական մարմնի ձևավորմանը:

11.4. Խորհրդի նախագահը պարտավորվում է սահմանված կարգով յուրաքանչյուր կիսամիակի մեկնարկին առաջին ամսվա ընթացքում դիմել ընտրական անկախ մարմնին ներկայացուչական մարմնի ընտրությունների կազմակերպման պահանջով:
11.5. Խորհրդի ձևաչափով կառավարման ընթացքում խորհուրդը իրականացնում է սույն կանոնակարգով բարձրագույն մարմնին տրված լիազորությունները՝ բացառությամբ ներկայացուցչական լիազորությունների, որոնք վերապահված են ուսանողական խորհրդարանին:

11.6. Խորհրդարանական կառավարման վերականգնումը կատարվում է անմիջապես խորհրդարանի ձևավորման պահից, ինչից հետո խորհրդի ձևաչափով կառավարման բոլոր որոշումները պահպանվում են ուժի մեջ՝ եթե դրանք չեն չեղարկվում խորհրդարանի կողմից:

Հոդված 12. Փոխարաբերությունը բուհի հետ

12.1. Ուսանողական ինքնակառավարման համակարգը գործում է բուհի ընդհանուր կառավարման համակարգի կազմում՝ պահպանելով ինքնավարությունը, անկախությունը և ուսանողական ինքնորոշման սկզբունքը:

12.2. Բուհի ղեկավարությունը չի կարող միջամտել ուսանողական ինքնակառավարման ներքին որոշումների կայացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք հակասում են օրենքին և բուհի կանոնակարգերին:

12.3. Ուսանողական ինքնակառավարման համակարգի պատասխանատու անձը՝ նախագահը պարտավորվում է սահմանված ռեժիմով, տեղեկատվական կարգով բուհի

ղեկավարությանը տեղյակ պահել ուսանողական ինքնակառավարման համակարգում ընդունվող ընթացիկ որոշումների, նախաձեռնությունների, ծրագրերի վերաբերյալ՝ ապահովելով համագործակցություն և թափանցիկություն:

12.4. ՈՒԽ-ը, նախագահությունը և ինքնակառավարման մարմինները պարտավոր են համագործակցել բուհի կառավարման մարմինների հետ՝ համատեղ լուծումներ մշակելով ուսանողների կրթական, սոցիալական և մշակութային կարիքների համար:

12.5. Բուհի ղեկավարության ներկայացուցիչը կարող է ներկա գտնվել ինքնակառավարման համակարգի նիստերին դիտորդի կարգավիճակով՝ նախօրոք համաձայնեցման պարագայում:

12.6. Բուհի ղեկավարությունը՝

- աջակցում է ուսանողական ինքնակառավարման համակարգի գործունեությանը՝ տրամադրելով անհրաժեշտ պայմաններ և ռեսուրսներ,
- ապահովում է ուսանողական կառույցների մասնակցությունը բուհի խորհրդակցական և կառավարման գործընթացներին՝ ուսանողական ներկայացուցչության սկզբունքով,
- պարբերաբար իրականացնում է հանդիպումներ ինքնակառավարման համակարգի ներկայացուցիչների հետ ուսանողական կյանքի և կրթական միջավայրի խնդիրները քննարկելու նպատակով:

12.7. Ուսանողական ինքնակառավարման համակարգի համապատասխան ոլորտային պատասխանատուները, իրենց լիազորությունների շրջանակում բուհի վարչական և ակադեմիական մարմիններին կարող են ներկայացնել առաջարկություններ, դիտարկումներ և եզրակացություններ՝

- Կրթական ծրագրերի որակի, կազմակերպման, գնահատման համակարգի, ուսանողների ակադեմիական իրավունքերի և ուսուցման գործընթացի բարելավման վերաբերյալ:
- Ուսանողների գիտահետազոտական ակտիվության, գիտական նախագծերի հասանելիության, հետազոտական հմտությունների զարգացման և գիտական միջոցառումների կազմակերպման վերաբերյալ:
- Ուսուցման պայմանների, սոցիալական աջակցության, ուսանողների ներգրավվածության, բարեկեցության և ներառականության ապահովման վերաբերյալ:
- Բուհի և ուսանողների միջև տեղեկատվական հարթակների, հաղորդակցության մեխանիզմների, հրապարակայնության և թափանցիկության ապահովման վերաբերյալ:
- Ուսանողական միջավայրի, տեխնիկական հնարավորությունների, գրադարանների, լաբորատորների, սրահների և այլ ենթակառուցվածքների հասանելիության ու բարելավման վերաբերյալ:

12.8. Ուսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները պարտավոր են հետևել բուհի ներքին կարգապահական և էթիկական կանոններին՝ ակադեմիական կառույցների նիստերին մասնակցել բարեխղճորեն, կառուցողական և ուսանողակետրոն դիրքորոշմամբ:

12.9. Բուհի ակադեմիական կառույցները պարտավոր են ուսանողական ինքնակառավարման մարմիններին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն ուսումնական գործընթացի վերաբերյալ:

12.10.Բուհի ղեկավարությունը պարտավոր է ապահովել ուսանողական ինքնակառավարման համակարգի անդամների պաշտպանությունը այն դեպքերում, երբ նրանք ենթարկվում են ճնշման կամ անհիմն սահմանափակումների՝ իրենց ինքնակառավարման գործունեության պատճառով:

Հոդված 13. Համակարգին տրամադրվող միջոցները

13.1. Ուսանողական ինքնակառավարման համակարգի գործունեության ֆինանսավորումն իրականացվում է բուհի ֆինանսական միջոցների հաշվին:

13.2. Համակարգին տրամադրվող միջոցները կարող են ներառել՝

- բուհի կողմից հաստատված տարեկան բյուջետային հատկացումներ՝ ուսանողական նախաձեռնությունների, ծրագրերի և միջոցառումների իրականացման համար,
- նյութական միջոցներ՝ տարածք, տեխնիկական սարքավորումներ, տեղեկատվական հարթակներ և այլն:

13.3. Տրամադրված միջոցները համարվում են բուհի սեփականություն և տրամադրվում են ուսանողական ինքնակառավարման համակարգին օգտագործման իրավունքով՝ բացառապես նպատակային և փաստաթղթավորված ծախսման պայմանով:

13.4. Ֆինանսական միջոցների օգտագործման և հաշվետվության կարգը սահմանվում է ինքնակառավարման համակարգի բարձրագույն մարմնի կողմից՝ համաձայն բուհի ֆինանսական քաղաքականության:

13.5. Ուսանողական ինքնակառավարման համակարգի բարձրագույն մարմնի ղեկավարը և տվյալ միջոցները տնօրինող մարմնի ղեկավարը կրում են անհատական պատասխանատվություն միջոցների նպատակային և թափանցիկ օգտագործման համար:

13.6. Ֆինանսական խախտումների, չհիմնավորված ծախսերի կամ հաշվետվության թերի ներկայացման դեպքում վերահսկիչ հանձնաժողովը կարող է նախաձեռնել քննություն՝ ներկայացնելով միջնորդություն նախագահությանը կարգապահական կամ ֆինանսական պատասխանատվություն սահմանելու վերաբերյալ:

13.7. Կարող են իրականացվել նաև համատեղ նախագծեր բուհի վարչական ստորաբաժանումների կամ արտաքին գործընկերների հետ՝ համաֆինանսավորման սկզբունքով:

13.8. Ֆինանսական հաշվետվությունը հրապարակվում է ուսանողական ինքնակառավարման պաշտոնական հարթակներում՝ ուսանողական հանրությանը հասանելի ձևաչափով, ոչ ուշ քան հաշվետու տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում:

Հոդված 14.Փոխհարաբերությունը արտաքին գործընկեր կառույցների հետ

14.1. Ուսանողական ինքնակառավարման համակարգը կարող է համագործակցել տեղական և միջազգային ուսանողական, կրթական, գիտական, հասարակական, պետական և մասնավոր կառույցների հետ՝ ուսանողական կյանքի, կրթական միջավայրի և առաջնորդության զարգացման նպատակով:

14.2. Արտաքին գործընկեր կառույցների հետ համագործակցությունը պետք է ունենա ուսանողական ինքնակառավարման համակարգի նպատակներին և արժեքներին համապատասխան բնույթ և չպարունակի քաղաքական, կրոնական կամ կուսակցական շահերի սպասարկման տարրեր:

14.3. Ուսանողական խորհրդարանը, նախագահությունը և առանձին ինքնակառավարման մարմինները կարող են.
ա) իրականացնել համատեղ ծրագրեր, միջոցառումներ և նախաձեռնություններ՝ ուսանողական զարգացման ուղղությամբ,
բ) մասնակցել տեղական և միջազգային ուսանողական ֆորումների, համաժողովների, վերապատրաստումների և կրթական փոխանակման ծրագրերի,
գ) ստորագրել համագործակցության հուշագրեր և համաձայնագրեր՝ համաձայն բուհի կանոնակարգերի և ռեկտորի հաստատման:

14.4. Ուսանողական ինքնակառավարման համակարգի բարձրագույն մարմնի ղեկավարը կամ նրա լիազորված ներկայացուցիչը հանդես է գալիս ուսանողական ինքնակառավարման համակարգի անունից արտաքին հարաբերություններում և ներկայացնում է համակարգի միասնական դիրքորոշումը:

14.5. Արտաքին գործընկերների հետ ցանկացած համագործակցություն պետք է իրականացվի թափանցիկ՝ ապահովելով.

- համագործակցության պայմանագրերի և ծրագրերի հրապարակայնությունը,
- ֆինանսական աղբյուրների բացահայտում և հաշվետվություն,
- շահերի բախման բացառման երաշխիքներ:

14.6. Ուսանողական ինքնակառավարման համակարգը կարող է անդամակցել տեղական կամ միջազգային ուսանողական միություններին, ցանցերին կամ պլատֆորմներին՝ պահպանելով ինքնուրույնության և որոշումների անկախության սկզբունքը:

14.7. Արտաքին կառույցների հետ փոխգործակցության շրջանակում ՈՒԽ-ն և նախագահությունը պարտավոր են ապահովել բուհի հեղինակության պաշտպանությունը, ինչպես նաև չվնասել բուհի և ուսանողական կառույցների համատեղ շահերը:

14.8. Միջազգային համագործակցության նախաձեռնությունները համակարգվում են նախագահության կողմից նշանակված պատասխանատու մարմնի միջոցով՝ համաձայնեցված կարգով:

14.9. Արտաքին հարաբերությունների ոլորտում ուսանողական ինքնակառավարման համակարգը պարտավորվում է գործել փոխադարձ հարգանքի, հավասար գործընկերության և փոխշահավետ համագործակցության սկզբունքներով:

Գլուխ 4. Եզրափակիչ մաս

Հոդված 15. Կանոնադրության փոփոխություններ և լրացումներ

15.1. Սույն կանոնադրության փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկ հոգաբարձուների խորհրդին կարող են ներկայացվել՝ ուսանողական խորհրդարանի անդամների առնվազն 2/3-ի որոշմամբ, նախագահության խորհրդից և վերահսկիչ հանձնաժողովից դրական եզրակացություն ստանալու պարագայում:

15.2. Փոփոխությունների կամ լրացումների նախագիծը ներկայացվում է հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

15.3. Փոփոխությունները ուժի մեջ են մտնում հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատումից հետո, պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օրը: